№ 154 ՀԻՆԳՇԱԲԹԻ 17 ՅՈՒԼԻՍԻ

1914

ՔԱՌԱՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ 17 ՅՈՒԼԻՍԻ № 154

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը
և 7 ամսվանը 6 ռուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Соломоновская ул., № 21.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆոն № 2—53.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.
Տպարանի տելեֆոն № 67.

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
Соломоновская ул., № 21.
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՅՈՒԼԻՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ
ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 6 ՌՈՒԲ.
Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ
ԿԸ ԹՈՂՆՎԷՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ.

Յայտարարութիւնների համար պիտի վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.։

1914 թւի տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1915 թ. լրիւ վճարած կլինեն բաժանորդավճար 10 ռուբլին, ՁՐԻԱԲԱՐ կը ստանան հետևեալ 2 գրքերից մէկն ու մէկը. «ԳՐ. ԱՐԾՐՈՒՆՈՒ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ 1865—1871 թ.», «ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ» Վրէժնի։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՊԱՍՏԱՌՆԵՐ
ԵՂԲ. ՏԱՐՆՕՊՕԼ
ՖԱԲՐԻԿԱՅԻ

Արժանացած մեծ պարգևի։ Հաճախվում են ՌՈՒՍԱՑ ՊԵՏՈՒԹԵԱՆ բոլոր յայտնի քաղաքներում։
Փաբրիկային իսկական գներով։
Պահեստում միշտ կարելի է ձեռք բերել մեծ քանակութեամբ բազմատեսակ պաստառներ վերջին ստիլի, ինչպէս էժանագինները, նոյնպէս և թանգարժէքները։ Բացառապէս լրիւ չափն է 11¼ արշ. երկար։
Սէզօնային նմուշներ ուղարկվում են 2 Ր Ի և օտար քաղաքներում։
Բաժանմունքը Թիֆլիսում.
Обои фабрики Бр. Тарнополь. Отдѣленіе въ Тифлисѣ. Голов. пр., № 21. Тел. № 3—55.
(Գ. շ.) տռ. 309. 50—28

ՎԵՐԱՅԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՊԱՐԿ

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ
ՌԷՍՏՕՐԱՆ ԵՒ ԲՈՒՖԷՏ
Տելէֆօն № 14—66.
Ասիական եւ եւրոպական կերակուրներ
ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԵՆ ՊԱՏՈՒԷՐՆԵՐ ՃԱՇԻ, ԸՆԹՐԻՔԻ ԵՒ ԱՅԼՆ։

ԱՄԷՆ ՕՐ, ցեր. ժ. 2-ից մինչև երեկ. ժ. 5-ը և երեկ. ժ. 10-ից մինչև գիշերվա ժամը 2-ը
ՆՈՒԱԳՈՒՄ Է
ՀԱՄԵՐԳԱՅԻՆ
Լաւագոյն սալօնային խումբը, լաւագոյն սօլիստների մասնակցութեամբ և ղեկավարութեամբ Լ. ՍՏՈՒԳԷԼԻ, նոյնպէս և զին. երաժշտախումբ։

ՋՐՕՍԱՆՔ ՆԱՒԱԿՆԵՐՈՎ
(տռ. Տ.) 379. 0—12

КИНОПЛАСТИКОНЪ
или
ТЕАТРЪ ИСКУССТВЕННЫХЪ ЛЮДЕЙ
Михайловскій пр., № 163
Съ четверга 17 Іюля
Полная перемѣна программы въ 8 отдѣленіяхъ, 2800 метровъ; новыя картины, первый разъ въ Тифлисѣ.

КИНОПЛАСТИКОНЪ.
БЕЗЪ ЭКРАНА:
Пустой домъ
первая кинопластическая комедія.
Вальсъ Шопена
классическій танецъ.

КИНЕМАТОГРАФЪ.
Князь Флоренціи современная сильная драма въ 3-хъ частяхъ и 44 отдѣльныхъ картинъ, богатая постановка;
участвуетъ извѣстная артистка КРАСАВИЦА ИТАЛІИ, безподобная танцовщица Кончита Ледесми, которая участвовала въ картинѣ «Ея послѣдній танецъ», всюду имѣвшая колоссальный успѣхъ.
Фарсъ!!! Фарсъ!!!
ОНА ХОЧЕТЪ—НО... ПАПАША НЕ ВЕЛИТЪ. Веселая комедія, фарсъ въ 3-хъ частяхъ.

Картины демонстрируются въ САДУ подъ музыку концертно-вѣнскаго ОРКЕСТРА. Начало въ воскресные и праздничные дни въ 6 ч., а въ будніе въ 7 ч. веч.
Цѣны мѣстамъ отъ 20 коп..
ДИРЕКЦІЯ.
717. 1—1

ԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ
ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Ռտիշչևսկայա 13, տելեֆօն 4—21.
Ընդունելութիւն թէ կանանց և թէ ծնէրին, նոյնպէս և վիրաբուժութեան կարիք ունեցող մնայուն (стаціонаръ) հիւանդների (բացի վարակիչ և հոգեկան հիւանդութիւններից) վաղօրօք գրվելու պայմանով։
Ընդունելութիւն՝ կանանց հիւանդ. ամեն օր՝ ժ. 11—12 առ.։
Հիւանդանոցի բժիշկները
Ա. Ա. Յարութինեան
Ն. Ն. Վեսելովզորով
Վ. Ա. Զակրժեվսկի
Ի. Գ. Կալամկարեան
Ա. Ա. Նովիցկիյ
Գ. Ն. Տէր-Ներսէսեան
Ա. Ր. Փիշէր
Ս. Պ. Շահպարոնեանց
(հ.կ.) տռ. 868. 100—72

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Ի. ՄՈՒՐԱԴԵԱՆ
(Օգնական Բեռլինի պրոֆ. Պօզնէրի)
ԱՐԴԷՆ ՎԵՐԱԴԱՐՁԵԼ Է ԲԵՌԼԻՆԻՑ և մայիսի 1-ից ընդունում է հիւանդներին ՊԵԱՏԻԳՕՐՍԿՈՒՄ։ (Կովկասեան հանքային ջրերում)։
Հասցէն՝ Пятигорскъ, Елизаветинская ул. д. Архипова, за соборомъ.
(Կ. Հ.) տռ. 104. 50—44

ԴՕԿՏՕՐ
Ա. Դ. ՇԱՀԲԱԶԵԱՆԸ
ԲԵՌԼԻՆՈՒՄ
Ասիստենտ Բեռլինի համալսարանի Charité հիւանդանոցի
Շարունակում է ընդունել Գերմանիա դիմող հիւանդներին և խորհրդակցութիւններ է կազմում մասնագէտ-պրոֆեսօրների հետ։
Նոր հասցէն՝ Берлинъ, Фридрихштрассе 133 а. Телефонъ Норденъ 34—69. Berlin, Friedrichstr. 133 a.
(օ. մ.) տռ. 391. 100—35

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՆՈՐ ԱՒԱՆՏԻՒՐԱ

Դեռ չէ լրացել խաղաղութեան մի ամբողջ տարի բալկանեան ահեղ պատերազմից ի վեր, ահա մի նոր սարսափահար փոթորիկ է սպառնում եւրօպական ժողովուրդներին.

Խախտվել է աւստրո-սերբիական բանակցութիւնների խաղաղ ընթացքը։ Վերջին օրերի սուր կոնֆլիկտը գտաւ իր վախճանը պատերազմական աւանտիւրայի մէջ։ Աւստրո-ունգարական միապետութիւնը չէ զգում իրան բաւարարված, չը նայելով, որ իր դրած ուլտիմատումի տասներկու կէտերից տասը ընդունել է Սերբիան։

Հաբսբուրգեան տոհմի վերջին գառամեալ ներկայացուցիչը, որ այնքան յաճախ խանգարել է թագաժառանգ Ֆրանց-Ֆերդինանդի ռազմական ձգտումների իրականացումը, տրամադիր է, ըստ երևոյթին, իր կեանքի վերջալոյսին նոր, գուցէ չափազանց ճակատագրական փորձութեան մէջ գլորել իր միապետութիւնը։

Ընթերցողը կարիք չունի առանձին փափկանկատ վերաբերմունք ունենալու դէպի Սերբիան, բացարձակապէս դատապարտելու համար Աւստրիայի պատերազմական ձեռնարկը։ Ի՞նչ իրաւունք ունի մի պետութիւն որևէ՝ թէկուզ շատ ծանր՝ տերրօրիստական ակտի համար պատասխանատու յայտարարելու մի ուրիշ պետութեան, ներկայ դէպքում Սերբիային, հիմք ծառայեցնելով լոկ այն փաստը, որ տերրօրիստը իր ազգային պատկանելութեամբ սերբ է, բայց մոռանալով, որ նա իր պետական հպատակութեամբ աւստրիացի է։ Ի՞նչ իրաւունք ունի Աւստրիան՝ ինքնօրէն հետապնդումների և խուզարկութիւնների պահանջներ անելու Սերբիայից, մոռանալով, որ դրանով կոխոտում է նա օտար պետութեան սուվերենիտէտի տարրական իրաւունքների սահմանները։

Բայց ո՞վ է իրաւունքի հարց բարձրացնում այնտեղ, ուր ուժեղը լարած ժանիքներ ունի միշտ փոքրին ու թոյլին անհետ կլանելու։

Իրաւունք ունի նա, ով ուժեղ է։

Այս է լօզունգը միլիտարիստական Եւրոպայում՝ պատերազմական իրաւունքի հողի վրա։

Եւ այն Աւստրիան, որ տասնեակ տարիներ շահագործեց Սերբիային իր առևտրական դաշնագրի քաղաքականութեան պահանջներով, այդ նոյն Աւստրիան բաց չը թողեց ոչ մի առիթ ճնշելու և բռնաբարելու Սերբիայի իրաւունքները ամեն անգամ, երբ համաեւրոպական կոնցերտը ի նպաստ իրան էր դասաւորվում։

Թէ ինչպէս կը վերաբերվեն յետագայում միացած հինգ մեծ պետութիւնները և մասամբ նաև բալկանեան մանր պետութիւնները դէպի բռնկված պատերազմը, դա դժուար է այժմեանից որոշապէս նախատեսել։ Փաստ է, յամենայն դէպս, որ երեքպետեան համաձայնութեան, մանաւանդ Ռուսաստանի համակրանքը, անշուշտ իր կրաւորական ձևերով, արտայայտվում է յօգուտ Սերբիայի։ Եռապետեան դաշնակցութիւնից հետաքրքրական է մասնաւորապէս Գերմանիայի դիրքը։ Վերջինս աշխատում էր իր դեսպանների միջոցով հասկացնել մեծ պետութիւններին, մանաւանդ Ֆրանսիային, որ տեղի ունեցող կոնֆլիկտը վերաբերում է միայն երկու պետութիւններին և պատերազմի դէպքում պէտք է կղզիացնել այն միայն Աւստրիայի և Սերբիայի միջև։ Դրանից յետոյ յայտարարեց գերմանական կառավարութիւնը պաշտօնապէս, որ Գերմանիան պատասխանատու չէ զգում իրան ոչ մի կերպ Աւստրիայի ուլտիմատումի համար։ Ինչ ասել կուզէ որ Գերմանիան առանձնապէս անհանգստանալու կարիք չի ունենայ, եթէ իսկապէս պատերազմը մնայ մինչև վերջը ուժեղ Աւստրիայի և թոյլ Սերբիայի «ներքին հաշիւների» գործ. չէ՞ որ իր եղբայր դաշնակիցը «հում-հում» կուտէ Ռուսաստանի «փայփայած» սանիկին։

Խաղաղութեան գաղափարի ջերմ երկրպագուները, ժողովուրդների համերաշխ ձգտումների եւ կուլտուրական խաղաղ զարգացման կողմնակիցները միայն խորին զայրոյթով կարող են արձանագրել պատերազմական նոր արիւնահեղ դրամայի քստմնելի փաստը և բուռն բողոք արտայայտել ընդդէմ կուլտուրական աւերածութեան և մասսայական ոճիրների նոր հեղինակի։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԱՏԵՐԱԶՄԸ ՅԱՅՏԱՐԱՐՎԱԾ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

15 յուլիսի

ՎԻԷՆՆԱ.—Պաշտօնական օրգանի արտակարգ համարի մէջ հրատարակված է պատերազմի հետևեալ յայտարարութիւնը.

«Որովհետև սերբիական կառավարութիւնը բաւարար կերպով չը պատասխանեց Բելգրադի աւստրո-ունգարական դեսպանի՝ նրան 1914 թ. յուլիսի 10-ին ներկայացրած նօտային, կայսերական կառավարութիւնը ստիպված է ինքը հանդէս գալ պաշտպանելու իր իրաւունքներն ու շահերը և այդ նպատակով դիմել զէնքի ոյժին։ Աւստրո-Ունգարիան ներկայ մոմենտից իրան համարում է պատերազմական դրութեան մէջ Սերբիայի հետ»։

ՎԻԷՆՆԱ.—Կառավարութիւնը հրատարակել է սերբիական պատասխան նօտայի տեկստը, իր ծանօթութիւնները անելով առանձին կէտերի նկատմամբ և բացատրելով թէ ինչու Սերբիայի պատասխանը անբաւարար է համարվում։ Առաջինը՝ մասնանշվում է, որ սերբիական կառավարութիւնը գիտակցաբար աղաւաղում է աւստրո-ունգարական հանդէս գալու պատճառները։ Աւստրո-Ունգարիան չէր պնդում, որ Սերբիան պաշտօնապէս փորձեր է ձեռնարկել Բօսնիայի դրութիւնը փոխելու։ Սերբիայի արարքի անկանօնութիւնը կայանում է նրանում, որ նա միջոցներ չէ ձեռք առել ճնշելու շարժումը, որը ուղղված է եղել միապետութեան տերիտօրիալ անձեռնմխելիութեան, նաև մամուլի և զանազան ընկերութիւնների վերաբերմամբ, որոնց՝ Աւստրո-Ունգարիայի նկատմամբ ունեցած թշնամական գործողութիւնները յայտնի են եղել սերբիական կառավարութեան։ Սերբիական կառավարութեան այն պնդումը, թէ իբր խորապէս ցնցվեց, իմանալով որ սերբ հպատակները մասնակցել են Սարաեվոյի սպանութեան պատրաստութեանը, ճիշդ չէ, որովհետև նա խկութեամբ տեղեակ էր որոշ անձերի վերաբերմամբ եղած կասկածի մասին և պարտաւոր էր իր սեփական նախաձեռնութեամբ քննութիւն կատարել։ Այնուհետև յայտնվում է, որ մամուլի և ընկերութիւնների վերաբերեալ օրէնքի առաջիկայ փոփոխութեան հաղորդութիւնը՝ Աւստրո-Ունգարիայի պահանջները բաւարարելու անհամապատասխան միջոց է։ Այն պնդումը, թէ իբր կառավարութիւնը ապացոյցներ չունի «Նարոդնայա Օդբրանա» ընկ. յանցաւոր գործողութիւնների մասին, հանդիսանում է առարկութիւն, որովհետև այդ ընկ. միապետութեան նկատմամբ ունեցած թշնամական պրօպագանդան լցնում է Սերբիայի ողջ հասարակական կեանքը։ Օֆիցէրների և պաշտօնական անձանց հեռացնելու համաձայնութեամբ սերբիական կառավարութիւնը մի շարք սահմանափակումներ է շարում։ Աւստրիական մարմինների՝ քննութեանը մասնակցելու հարցի վերաբերմամբ սերբիական կառավարութիւնը կանխամտածօրէն «քննութիւն» արտայայտութիւնը փոխում է «դատական քննութեան», որ աւստրիական կառավարութիւնը իսկապէս ի նկատի չէ ունեցել, որ իր մարմինները մասնակցեն սերբիական կառավարութեան մէջ. Նրանք, այդ մարմինները, մասնակցելու են միայն ոստիկանութեան քննութեան։ Վերջապէս այն յայտարարութիւնը, թէ Ցիգանովիչին անկարելի եղաւ գտնել, անկեղծ չէ համարվում, որովհետև նա մահափորձից երեք օր յետոյ, երբ յայտնի դարձաւ նրա մասնակցութիւնը, մեկնեց Ռիբարի։

ԲՈՒԴԱՊԵՇՏ.—Յուլիսի 15-ին պատգամաւորների պալատում մինիստր-պրեզիդենտ Տիսսան մի զեկուցում ներկայացրեց՝ պատերազմի դէպքում բացառիկ միջոցներ ձեռք առնելու վերաբերեալ և յայտնեց, որ զեկուցումը պալատ մտցնելովը բնորոշվում է գոյութիւն ունեցող դրութիւնը։ Տիսսան յայտնեց, որ ամբողջ ազգութիւնը արձագանք կը տայ թագաւորի կոչին։ Ապպօնի օպպօզիցիայի անունից յայտնեց. «Ներկայ մոմենտում ամեն տեսակ տարաձայնութիւն մեր մէջ չքանում է։ Մեզ ղեկավարում է միայն մի միտք, որ միապետութիւնը անբաժան ոյժերով դուրս գայ կռւի և հասնի աջողութեան»։

Հրովարտակ յայտարարվեց պարլամենտի նստաշրջանը փակելու մասին։ Նիստը փակվեց։

ԼՈՆԴՈՆ.—«Ստանդարդ» թերթը, որ յայտնի է իր աւստրիական կապերով, յայտնում է, որ աւստրիական զօրքերը այսօր կը մտնեն Սերբիա։

Արտաքին գործերի մինիստրութեան մէջ ստացված տեղեկութիւններից երևում է, որ Ֆրանսիան համաձայնութիւն է տուել Գրէյի առաջարկին՝ միջազգային կոնֆերենցիա գումարելու։ Իտալիան նոյնպէս համաձայնութիւն է տուել Գրէյի առաջարկին։

Համայնքների պալատում Գրէյը յայտնեց, որ գերմանական կառավարութիւնը պատասխան չէ տուել իր առաջարկին։

«Կեօլնիշէ-Ցայտունգին» հեռագրում են Բեռլինից, թէ սխալ կը լինէր ենթադրել, որ Գերմանիան համաձայնի իր միջնորդութեամբ տհաճութիւն պատճառել իր դաշնակցին։

ԼՕՆԴՕՆ.—Իտալական ռազմանաւերը, որ այցելել էին Գլազգօ, ետ են կանչվել։

Րէյտէրի գործակալութեան հեռագրում են Նիշից, որ աւստրիացիները Օրսովի մօտ բռնել են սերբիական մարդատար նաւեր «Բէլգրադ» և «Մօրավա», բարձրացրել են աւստրիական դրօշակ և գերել են ճանապարհորդներին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—(Պաշտօնական)։ Հայրենասիրական բազմաթիւ ցոյցերը, որ վերջին օրերս տեղի ունեցան մայրաքաղաքներում և կայսրութեան ուրիշ վայրերում, ցոյց են տալիս, որ կառավարութեան հաստատ և հանգիստ քաղաքականութիւնը հա[illegible] է գտել ազգաբնակութեան լայն շրջաններում։ Կառավարութիւնը յոյս ունի սակայն, որ ժողովրդական զգացումների այդ արտայայտութիւնը անբարեացակամ վերաբերմունք [illegible] դէպի այն պետութիւնները, որոնց հետ Ռուսաստանը գտնվում է և ցանկանում է գտնվել հաշտութեան մէջ։ Ընդգծելով ժողովրդական ոգու բարձրացման ոյժը և ռուս մարդկանց հանդստութեան կոչելով, կայսերական կառավարութիւնը պաշտպան է կանգնած Ռուսաստանի շահերի արժանապատւութեան։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Աւստրիայի պատերազմի յայտարարութիւնը չը տեսնված արագութեամբ տարածվեց քաղաքում։ Փողոցներում անօրինակ կենդանութիւն է տիրում։ Երեկոյեան ժամը 10-ին, Նևսկի պրօսպեկտի վրա կազմվեց հազարաւոր ամբոխ, որը հիմն երգելով շարժվեց դէպի աւստրիական միսսիան։ Ճանապարհին ցուցարարներին միացան նոր խմբեր։ Մօտ 10 ազգային դրօշակներ պարզվեցին։ Կանչեր էին լսվում՝ «Կեցցէ Սերբիան». սերբիական միսսիայի առջև աղմկալից ցոյց կազմվեց։ Լուսամուտում երևաց սերբիական դեսպանը, որ ուզում էր ճառ ասել և ամբոխի ծափահարութեան առարկան դարձաւ։ Սերբիական միսսիայից ցուցարարները փորձեցին խուժել աւստրիական դեսպանատան շէնքը, սակայն ուժեղացած կազմով ոստիկանութիւնը կտրեց նրանց ճանապարհը։ Այնուհետև ցուցարարները դիմեցին ֆրանսիական դեսպանատուն, ուր նոյնպէս աղմկալից ցոյց կազմվեց. կանչում էին՝ «Կեցցէ Ֆրանսիան և ֆրանս-ռուսական դաշնակցութիւնը»։ Կէս գիշերին Նևսկի պրօսպեկտի վրա կազմվեցին ցուցարարների նոր խմբեր, որոնք հիմն երգելով նորից գնացին դէպի սերբիական միսսիան և ցոյց կազմեցին։ Ցոյցերը Պետերբուրգի փողոցներում շարունակվում են։ Փողոցներում գտնւող զինուորականները բուռն ծափահարութիւնների առարկայ էին դառնում ամբոխի կողմից, ըստ որում կանչեր էին լսվում՝ «Կեցցէ ռուսական զօրքը»։

ՄՕՍԿՎԱ.—Երեկոյեան ժամը 11-ին ինտելիգենտներ՝ 500 հոգուց բաղկացած ամբոխը հաւաքվեց Տվէրսկի բուլվարի վրա և հիմն երգելով և «ուռաներով» դիմեց աւստրօ-ունգարական հիւպատոսարան։ Ոստիկանութիւնը կանգնեցրեց նրանց, և նրանք խաղաղութեամբ ցրվեցին։

ՎԻԷՆՆԱ.—Սերբիական դեսպանը մեկնեց Բելգրադ։

ՎԻԷՆՆԱ.—Լրագրները հաղորդում են, որ սերբերը Բելգրադի և Զեմլինի միջև եղած կամուրջը քանդել են։

ԻՇԼ.—Յուլիսի 15-ին ժամանեց արքիդուքս Կարլ-Ֆրանց-Յովսէփը և ընդունվեց թագաւորի կողմից։

ԻՇԼ.—Ժամանեց Բելգրադի աւստրիական դեսպանը և զինուորական գործակալը։ Դեսպանը ունկնդրութեան ընդունվեց թագաւորի կողմից։

ԲՈՒԴԱՊԵՇՏ.—Բուխարեստ մեկնեց սերբիական աւագ հիւպատոսը։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

15 յուլիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Ժանտախտի դէմ կռւող յանձնաժողովի տեղեկութիւնների համաձայն, Պօզօլի նահանգի երեք գաւառում ժանտախտով հիւանդանալու 141 դէպք է եղել, դրանից 64-ը մահացու։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.— Աստրախանի նահանգի Չեռնօեարի գաւառում ժանտախտով հիւանդանալու երկու դէպք է եղել։

Կ. ՊՈԼԻՍ.—Քաղաքական բարդութիւնների պատճառով, մեծ վէզիրը հրաժարվել է Բրիւսէլ գնալուց՝ Վենիզելոսի հետ տեսակցելու։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԵԾ ԿԱՐԻՔԻ ԱՌԱՋ

Ազգերի առաջադիմութեան գործի մէջ ոչ ոք չէ կարող ժխտել մամուլի և գրականութեան խոշոր դերը։ Սակայն հայկական իրականութեան մէջ մամուլն ու գրականութիւնը չեն ըմբռնվում այն իմաստով, ինչ որ նրանք ունեն իրօք, ինչպէս այդ հասկացվում է հասարակ կուլտուրական աշխարհներում։ Երևոյթի պատճառը բացատրվում է նրանով, որ մեր մէջ գրականութիւնն ու մամուլը կազմում են ժողովրդի փոքրամասնութեան սեփականութիւնը։

Նա լայն շրջաններ չէ ընդգրկում, նա համընդհանուր բնոյթ չէ կրում։ Եթէ վերցնելու լինենք նոյնիսկ մեր միւս հասարակական կոչված բարեգործական, այլ խօսքով կուլտուրական հիմք ունեցող հիմնարկութիւնները, կը նկատենք, որ նրանք ևս լինելով մասնաւոր ձեռներէցութեան արդիւնք՝ խոր արմատներ չունեն ընդհանուր հայութեան խաւերում։ Նեղ ու սահմանափակ է այն շրջանակը, որի մէջ կուլտուրական տենչերով գոյութիւն ունեն հայ հասարակական հիմնարկութիւնները։ Ահա այդպէս են նաև մամուլն ու գրականութիւնը մեր մէջ։

Ժամանակակից հասարակական կեանքում մամուլը գնալով աւելի և աւելի անհրաժեշտութիւն է դառնում։ Կեանքի բարդացման հետ նրա արժէքն ու կարիքը աւելի քան զգալի չափերի է հասնում։ Սակայն փաստեր գալիս են մեզ ասելու, որ մեր կեանքում մամուլը գնալով աչքի ընկնող առաջադիմութիւն չէ անում։ Ճիշդ է, հայ իրականութեան մէջ սունկի պէս իրար ետևից բուսնում և չքանում են նորանոր պարբերականներ նորանոր անուններով, բայց պահանջի ընդհանուր ծաւալը և ընթերցողների քանակը առանձին փոփոխութիւն չէ ներկայացնում։ Բացատրել այս երևոյթի պատճառը նրանով, որ հայ ժողովուրդը ընթերցասէր չէ, որ մամուլի կարիքն ու պահանջն աննշան է, չենք կարող։

Եթէ մտնելու լինենք մեր գաւառների ամենայետին անկիւնները, կը նկատենք, որ այնտեղ ևս խօսվում է մամուլի մասին, որ նրանք ևս հետաքրքրվում են դրսի աշխարհով, որ նրանց համար նոյնպէս շատ ցանկալի է տեղեակ լինել տեղի ունեցող անց ու դարձին։ Այս գիտակցութիւնը կայ ամենուրեք, սակայն շատ աղօտ։ Եւ երբ այդ պահանջի հետ միաժամանակ հանդէս է գալիս և նիւթական [illegible] ռացին իր աղօտ գիտակցութեան մէջ թաղում է և մամուլի մասին ունեցած աղօտ միտքը։

Իրաւունք ունե՞նք աւելին պահանջելու. Չէ որ նոյն տեսակի գիտակցութիւն ունի յետամնաց ու խեղճ գաւառացու եղբայրը՝ շատ թէ քիչ զարգացած քաղաքացին։ Այս վերջինը ունի սակայն իր ուրոյն պահանջները, ուրոյն կենցաղն ու շրջապատը. հետևապէս նրա անտարբերութիւնն ու յետամնացութիւնը նոյնպէս հասկանալի է։

Մամուլն ու գրականութիւնը, որ մեծ գործ պիտի կատարեն մեր գաւառներում, կարիքներով ծանրաբեռնված, ֆիզիքապէս և մտաւորապէս հիւծված ժողովրդի մէջ, ցաւ ի սիրտ պէտք է ասել, որ մեր շատ ծայրագաւառներում դեռ մուտք չեն գործել. այն ինչ՝ ամեն տեսակի վնասակար երևոյթներ արմատներ են դրել այնտեղ, շնորհիւ դրսից եկած ազդեցութիւնների։

Արդ՝ ինչ միջոցներով կարելի է գաւառների մէջ մամուլն ու գրականութիւնը տարածել, նրանց մասին եղած աղօտ գիտակցութիւնը պարզել, զարգացնել։

Այն միջավայրում, ուր դեռ տիրում է հին, վարագուրված միտքը, հին հասկացողութիւնը, հին կենցաղը և դրա հետ միասին խեղճութիւնը, այդպիսի վայրում, մեր կարծիքով, մամուլն և գրականութիւնը կարող են մուտք գործել մասնաւոր ձեռներէցութեան միջոցներով, ժողովրդի ինքնագործունէութեամբ և բարեգործութեան միջոցով։

Առաջին դէպքում գաւառներում շատ թէ քիչ կրթված ոյժերի նախաձեռնութեամբ է, որ պէտք է տարածվեն մամուլն ու գրականութիւնը՝ հիմնված համայնական միջոցների և գործակցութեան վրա։

Գիւղի ուսուցիչը, մտաւորականը, քահանան կամ այլ ուրիշ անձնաւորութիւն, որոնք գիտակցում են մամուլի արժէքը, պէտք է ամենայն կերպ աշխատեն բարձրացնել այն միջավայրի միտքը, որտեղ ապրում են ու գործում իրանք։ Նրանք իրանք օրինակ լինելով հանդերձ պիտի ուժեղ շարժում մտցնեն այդ ուղղութեամբ։ Այդպիսիների ջանքերով է, որ ընդհանուր միջոցներով պէտք է ստացվեն պարբերական հրատարակութիւններ և հանրամատչելի գրքեր. այդպիսիների նախաձեռնութեամբ պէտք է բացվեն կիրակնօրեայ [illegible]բամունքներ, հանրամատչելի դասախօսութիւններ։

Երկրորդ միջոցը բարեգործական նպատակով եղած նուիրաբերութիւններն են։ Մեր կարծիքով, բացի հայ հարուստներից, որոնք բարոյական մեծ գործ կատարելով թերթեր և ընթերցանելի գրքեր են նուիրաբերում գիւղական դպրոցներին, հայ բարեգործական, ուսումնասիրաց և այլ ընկերութիւնները նոյնպէս պէտք է աւելի էական նշանակութիւն տան այս գործին։ Ամենամեծ բարեգործութիւնը յետամնաց միտքը խաւարից առաջ շարժելն է, արթնացնելն է։

Մամուլի և գրքերի միջոցով փրկած կը լինենք այս ձևով համայնական կենցաղը, միտքը։ Այն չարիքը, ինչ որ առաջացնում է տգիտութիւնը, չէ կարող ամոքել և ոչ մի բարեգործութիւն։ Նրա միակ միջոցը մամուլն և գրականութիւնն են։ Չարիքների արմատը տգիտութեան մէջ է. հետևապէս պէտք է կռւել այդ տգիտութեան դէմ։

Եւ եթէ հայ հարուստ բարեգործը, հայ ուսուցիչը, հայ մտաւորականը, հայ քահանան նուիրաբերեն իրանց ոյժերի մի փոքր մասը յետամնաց ու տգէտ ժողովրդի առաջադիմութեան գործին, այդպիսով նրանք կատարած կը լինեն իրանց քաղաքացիական և բարոյական պարտաւորութիւններից մէկը։

Մեր գաւառները քայքայման ուղու վրա են կանգնած. օգնութիւն է պէտք, գործող ոյժեր...

Կոմս

ԷԼԵԿՏՐԱՔԱՐՇԻ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԳՈՐԾԱԴՈՒԼԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

I

Թիֆլիսի ոստիկանապետի յայտարարութիւնը

Անօնիմ ընկ. գործադուլաւոր ծառայողներից շատերի հետ անձամբ խօսակցութիւն ունենալով, որոնք ինձ մօտ են եկել գործադուլի ստեղծած աննորմալ դրութեան մասին բացատրութիւններ տալու, նկատում եմ, որ գործադուլաւորների ճնշող մեծամասնութիւնը գտնվում է գրգռողների մի փոքրաքանակ խմբակի ազդեցութեան տակ, և նրանց հնարաւորութիւն չեն տալիս ոչ միայն աշխատանքը՝ երբ վերսկսելու, այլ անգամ տնից դուրս գալու։ Դրա հետ միասին, նոյն խմբակը լուրեր է տարածում, որ էլեկտրաքարշի գրասենեակը ներկայացող ամեն մի հոգի, դիցուք վերջնական հաշիւ ստանալու, անպայման ձերբակալվելու է ոստիկանութեան կողմից, որպէս գործադուլի մասնակցող։

Այս ի նկատի ունենալով, ծառայական և բարոյական պարտք եմ համարում յայտնել ի գիտութիւն, որ իմ պահպանութեանը յանձնված քաղաքի բոլոր բնակիչները, դրանց թւում և խաղաղ գործադուլաւոր ծառայողները, միշտ գտնվում են ոստիկանութեան անդուլ պաշտպանութեան ներքոյ, ոստիկանութեան որը կոչված է ամենուրեք հասարակական հանգստութիւնը և ապահովութիւնը պահպանելու, այդ բառի ընդարձակ իմաստով, և որ հասարակական կարգի ամեն տեսակի խախտումն, առաւել ևս սպառնալիքն ու բռնութիւնը ինձ յանձնված իշխանութեան ոյժով ճնշվելու են ամենախիստ միջոցներով։

Ինչ վերաբերում է էլեկտրաքարշի այն գործադուլաւոր բանւորներին, որոնք ցանկանում են աշխատանքները վերսկսել, կամ գրասենեակը ներկայանալ վերջնական հաշիւ ստանալու, բայց վախենում են չար մարդկանց բռնութիւններից, սրանով խորհուրդ եմ տալիս նրանց, ուշք չը դարձնելով սպառնալիքներին, գործել ինքնօրէն, յիշելով որ նրանցից իւրաքանչիւրը, ինչպէս և ամենքը, գտնվում են և յետագայում պէտք է գտնվեն ոստիկանութեան պաշտպանութեան և պահպանութեան ներքոյ։

Ոստիկանապետ՝ Զդանովսկի

II

Երէկ և նախանցեալ օրը էլեկտրաքարշի գծերի վրա գործում էին 24 վագոն, որ կառավարում էին զինւորներ և ոստիկանական պաշտօնեաներ։ Հեռացված գործադուլաւոր ծառայողների 5 ներկայացուցիչները ամսիս 15-ին, քաղաքագլխի պաշտօնակատարի ներկայութեամբ, բանակցութիւններ էին վարում անօնիմ ընկ. լիազօր Ե. Բ. Բասինի հետ, վերջնական հաշիւները ստանալու պայմանների մասին։ Ծառայողների ներկայացուցիչը յայտնեցին, որ նրանցից ոչ մի առանձին չի գայ հաշիւ ստանալու, և պնդում էին, որ էլեկտրաքարշի վարչութիւնը վճարի 1911-ից մինչև 1914 թ. աւել ժամի աշխատավարձը։ Ինժ. Բասին, ինչպէս և առաջ, պնդում էր, որ այդ «պահանջը», որ նրանք առաջ էլ դրել են, անհիմն է, և ծառայողները, եթէ համաձայն չեն, կարող են պահանջ ներկայանել ընկերութեան։ Ծառայողների ներկայացուցիչները առաջարկեցին, որ նրանք չեն կամենում դատվել ի վերջոյ, ծառայողներից երկուսը առաջարկեցին այդ հարցի լուծումը յանձնել միջնորդ դատարանի, որը կազմված կը լինի ծառայողների երեք և էլեկտրաքարշի վարչութեան երեք ներկայացուցիչներից։ Ինժ. Բասին ըստ երևոյթին համաձայն էր այդ վէճը միջնորդ դատարանին յանձնելու, բայց երբ ծառայողները աւելացրին, որ միջնորդ դատարանը քննի և պահանջների 26 կէտերը, Բասինը հրաժարվեց։ Բանակցութիւնները առ այժմ ոչ մի հետևանքի չեն հասել։

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ ԱՅՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

I

Գանձակի գաւառի մի քանի մասերում ապրում են «այրում» կոչված թուրքերը։

Ե. Լալայեանը իր «Գանձակի գաւառ» գրքում յայտնում է, որ իբր թէ այդ թուրքերը Յունաստանից են գաղթել և դրա համար էլ իրանց անուանում են «այրում», այսինքն «այ յոյն»։

Ե. Լալայեանի այս բացատրութիւնն իսկապէս չէ համապատասխանում իրականութեան, որովհետև այրումների մէջ քիչ թէ շատ մնացած և նրանց հետ ծանօթ անձնաւորութիւնը նրանց ծագման մասին բոլորովին ուրիշ կարծիք է կազմում։

Ճիշդ է, այրումներն իրանց մասին յայտնում են, թէ իրանք Յունաստանից են գաղթած, սակայն այս էլ են աւելացնում, որ իրանց պապերը հայեր են եղել։

Յօդուածիս հեղինակը պատմել է այրումների, որոնք հայկական ազգանուններ են ունեցել. օրինակ Ղազար-օղլի, Եաղուբ-օղլի և այլն։ Այրումների Եաղուբլի գիւղը ամբողջապէս հանդիսանում է մահմեդականացած հայ Յակոբի սերունդը, որի անունից և կոչվում է Եաղուբլի։

Գարամուրադ գիւղի թուրքերը հանդիսանում են հայ իշխանական ցեղից սերվող Ղարամուրադի սերունդը։

Այրումների հետ մօտ ծանօթանալուց, ինչպէս ասում են՝ նրանց ազգն ու տակը քրքրելուց յետոյ, մարդ ակամայ համոզվում է, որ այդ խեղճ ու կրակ մահմեդականները ոչ այլ ոք են, եթէ ոչ մեր Գարդմանայ Ձորի անպարտելի քաջերի սերունդը։

Մինչև այժմ այրումների մէջ մնացել են մի քանի հայկական խօսքեր, օրինակ հանդ, հաւալիք (աւելուկ), հախչիխ (աղջիկ) և այլն։

Վերոգրեալն աչքի առաջ ունենալով՝ այրումների ծագման և նրանց այդպէս անուանվելու մասին բոլորովին տարբեր եզրակացութեան կարելի է հանգել. այսինքն «այրում» ոչ թէ կը նշանակէ «այ յոյն», այլ «հայ-յոյն», և այդ խօսքը ուղղակի «հայ-րում» խօսքի աղաւաղումն է։ Քիչ թէ շատ կրթված այրումները հաստատում են իմ այս ենթադրութիւնը։ Օր. մի ախունդ ինձ հաւատացնում էր, որ հին գրութիւնների մէջ այրումներն անուանվում են «հայ-րում», և նա էլ ինձ նման համոզված էր, որ այրումները հայերից են ծագում։

«Այրում» խօսքի նշանակութիւնն այսպէս բացատրելուց յետոյ՝ ես թոյլ եմ տալիս ինձ պնդել, որ այրումները հանդիսանում են որպէս քաղկեդոնիկ կամ յունադաւան հայերի մնացորդներ, այնպէս որ նրանք իրանց ծագման խնդիրն աղաւաղում են, այսինքն իրանց փոխանակ յունադաւան հայերի՝ Յունաստանից գաղթած հայերի սերունդ են համարում։

Թէ Գանձակի գաւառի հայերի մէջ հին ժամանակ յունադաւանութիւնը մուտք է գործել, այդ մասին յիշատակութիւն կայ Մովսէս Կաղանկատուացու պատմութեան մէջ։

Հին ժամանակ, հայկական տիրապետութեան օրերում, Գանձակի գաւառի 2, 3, 4 և 5 գաւառամասերը կոչվում էին միասին Գարդմանայ Ձոր կամ Գարդմանացոց աշխարհ։ Սկզբում այդ երկրի տէրերը հանդիսանում էին Հայկազն Եռանշահիկ իշխանները, որոնք թէ Մեծ Հայքի և թէ Աղուանից երկրի պատմական կեանքում մի առանձին դեր չեն խաղացել։

Սակայն VI դարում այդ երկիրը գրաւում են պարսից Սասանեան տոհմին ցեղակից Միհրանեան իշխանները, որոնք Եռանշահիկ ցեղը ոչնչացնելով սկսում են Աղուանից երկրի մէջ ղեկավարող դեր կատարել։ Այդ ցեղից էր և նշանաւոր Ջուանշէր իշխանը, որի առաքինութիւնների, քաջագործութիւնների և իմաստութեան մասին այնքան գովասանքով է խօսում Մ. Կաղանկատուացին։

Երբ VI դարում վրացիք, շնորհիւ ժամանակակից Աբրահամ կաթողիկոսի փառասիրական ձգտումների, բաժանվեցին հայ եկեղեցուց, նրանց օրինակը Աղուանից երկրում տեղ-տեղ հետևողներ ունեցաւ, սակայն սկզբում դա մեծ ծաւալ չէր ստանում։

Բայց VII դարի վերջում Գարդմանայ եպիսկոպոս Ներսէս Բակուրը Ջուանշէրի յաջորդ Վարազ-Տրդատի կին Սպարամի կողմից քաջալերութիւն գտնելով՝ սկսեց իր թեմում մտցնել յունադաւանութիւնը։ Նա սկզբում գործում էր ծածուկ կերպով և զգուշութեամբ, սակայն երբ վերջը, շնորհիւ իր պաշտպան տիկնոջ, կաթողիկոսական գահը բարձրացաւ, այն ժամանակ սկսեց համարձակ գործել։

Աղուանից եպիսկոպոսները Ներսէսի ազգադաւ գործունէութեան մասին գրում են հայոց Եղիա կաթողիկոսին. վերջինը, աչքի առաջ ունենալով վրացիների բաժանման տխուր պատմութիւնը և խաղաղ միջոցներով ազդելու կասկածելի հետևանքը, դիմում է մի շատ տգեղ, բայց կտրական միջոցի։ Նա ժամանակակից արաբական խալիֆա Աբդուլմելիք Էմիր Ալմումինին մի մատնագիր է գրում, որով Ներսէսին զրպարտում է, որ իբր թէ Աղուանից ժողովուրդը կամենում է յունադաւան դառնալ և յունաց կայսրին հնազանդեցնել։ Խալիֆան իսկոյն հրամայում է իր զօրավարներից մէկին Եղիայի հետ գնալ Պարտաւ քաղաքը, ուր բռնում են Ներսէսին և տիկին Սպարամին և նրանց շղթայակապ ուղարկում Դամասկոս, ուր նրանք սովամահ են լինում։

Շատ հաւանական է, որ, չը նայելով գործ դրված խիստ միջոցներին յունադաւանութիւնը իսպառ վերացած չը լինէր Գարդմանացոց երկրում, այլ ծածուկ ունենայր իր հետևողները, որոնք յետոյ մահմեդական լծի տակ բռնի կերպով հաւատափոխ են եղել։

Ես այրումներից շատերից եմ լսել, որ նրանք բռնի կերպով են մահմեդական դարձել, որի պատճառով նրանք իրանց անուանում են «գլէջ մուսուլմանի», այսինքն սուր

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՒԱԶԱԿ ԻԶՄԵՐԱՅԸ

(Թարգմ. ռուսերէնից)

Երբ նրանք անցնում էին հոգեկան հիւանդանոցի լայն ու արձագանքող միջանցքով, ծերունի բժիշկը, ցոյց տալով դռներից մէկը, ասաց իր հիւրին, որ մի երիտասարդ միչման էր.

— Ահա այս սենեակումն է գտնվում իմ հետաքրքրական հիւանդներից մէկը։

— Ո՞վ է,—հարցրեց միչմանը։

— Աւազակ Իզմերայը։

— Այսինքն,—ըստ երևոյթին միչմանը ոչինչ չը հասկացաւ բժշկի պատասխանից։

— Այսինքն՝ հիւանդը անուանում է իրան «Աւազակ Իզմերայ», որ խաչված էր Քրիստոսի աջ կողմից և որը չը զղջաց մինչև մահը. Հետաքրքրակա՞ն է։ Կուզե՞ք տեսնել։

— Ի՞նչ հարկ է,—բացագանչեց միչմանը։

— Բայց առաջ քեզ պատմեմ հիւանդի համառօտ կենսագրութիւնը։ Այո՞։

— Անշուշտ։

Նրանք՝ բժիշկը և իր հիւրը նստեցին փայտէ նստարանի վրա նոյն միջանցքում։ Բժիշկն ակնոցը սրբեց և տարակուսած խօսեց.

— Աւազակ Իզմերայը...

— Տարօրինակ է,—կրկնում էր միչմանը։

— Ծնունդով պարսիկ է, Բագուի շրջանից,—շարունակեց բժիշկը նոյն տարակուսանքով։—Սկզբնական կրօնով հեթանոս էր։ Տաս տարեկան հասակում սեփական կամքով քրիստոնէութիւն ընդունեց և մկրտվելով ստացաւ «Դեմիան» անունը, որը կը նշանակէ՝ «յամառ»։

— Յետոյ։

— Յետոյ՝ մտաւ ծառայութեան հետևակ գնդի զօրաբանակը երբև կամաւոր և գնաց կռւելու Կարսի շրջանը՝ պատերազմի ժամանակ։

— Վերջին ռուս-թիւրքական պատերազմի ժամանա՞կ էր այդ։

— Այո։ Պատերազմի ժամանակ ստացաւ աստիճաններ և Վլադիմիրի նշանը՝ ժապաւէնով։ Յայտնի եղաւ իր անսահման անվեհերութեամբ և գազանային անգթութեամբ աւազակ բաշիբոզուկների դէմ։ Մի օր էլ, բռնելով հայոց եկեղեցիներից մէկը այրողներին, կամեցել էր նրանց ողջ-ողջ այրել. և կրակը վառելու համար արդէն պատրաստել էր ծղօտներ, սակայն բարեբաղդաբար ժամանակին զօրաբանակի հրամանատարը արգելք էր հանդիսացել։ Նրա ընկերները կասկած էին յայտնում, թէ նա քիւրդի մի աղջիկ է բռնաբարել։ Կատաղի քաջութեամբ մտնում էր ամենաառաջ կռւի մէջ, արհամարհելով ամենայն նախազգուշութիւն և առիւծի պէս անվեհեր զինւորներ տանելով իր հետ։

— Ի՞նչ է նրա այժմեան կոչումն ու անունը։

— Պահեստի օֆիցեր Դեմեան Պետրովիչ Նուրալիմբէկ։ Պատերազմից յետոյ նա դուրս եկաւ ծառայութիւնից և Վոլգայի ափերի քաղաքներից մէկում մեղրի առևտուր սկսեց,—շարունակեց բժիշկը։—Ծխը թափելով սկսել էր կարդալ Աւետարանը, որի մասին բոլորովին գաղափար չունէր, չը նայած որ քրիստոնէութիւն էր ընդունել։ Ապա կարդում էր ամեն ինչ, որ Քրիստոսին էր վերաբերում։ Մի օր էլ՝ անգլիերէնից թարգմանված մի գրքի մէջ կարդացել էր՝ իբր թէ Քրիստոսի հետ միասին խաչված և չապաշխարած աւազակի անունը Իզմերայ էր։ Ինչպէս երևում է, այդ միևնոյն անունը կրում էր ինքը, երբ դեռ հեթանոս էր... Տարօրինակ է... Այո, տարօրինակ է,—բացագանչեց բժիշկը յուզված։

Միչմանը նայեց բժշկին տարակուսած, որովհետև յանկարծ այլայլված կերպարանք էր ստացել նա։

— Յետոյ,—խնդրեց միչմանը խղճալով բժշկին և շարժելով նրա արմունկը։

Բժիշկը շարունակեց.

— Պահեստի օֆիցեր Նուրալիմբէկն իսկոյն ծախեց խանութը և մտաւ վանք՝ ապաշխարելու։ Սակայն կէս տարուց յետոյ ծածուկ փախաւ այնտեղից և մտաւ խոլերայի բարակը գթութեան եղբօր պաշտօնով։ Շնորհիւ իր անվեհերութեան՝ ինքն էլ հիւանդացաւ խոլերայով, բայց զարմանալի հեշտութեամբ կրեց հիւանդութիւնը։ Դրանից յետոյ՝ վիրակացուի պաշտօնով մտաւ սապոնի գործարան և մի անգամ հրդեհի ժամանակ թռաւ կրակի մէջ, որպէսզի ազատէ ծխում խեղդվող... ինչ էք կարծում, ում... մի կատուի։ Կատուին ազատեց, բայց ինքը կրակից ստացաւ ծանր վէրքեր ուսի վրա։

— Յետոյ։

— Յետոյ՝ հոգեկան հիւանդութիւն ստացաւ։ Բանն այն է, որ աւագ-ուրբաթ օրը նրա ձեռների ափերի մէջ և ոտքերի վրա տարօրինակ վէրքեր առաջացան... խոր վէրքեր... Կարծես խփված մեխերի հետքեր լինեն... Տարօրինակ է, այնպէս չէ՞, շատ տարօրինակ է—բացագանչեց նորից բժիշկը։

— Եւ ինչ։

— Եւ նա սկսեց երևակայել իրան...

— Աւազակ Իզմերա՞յ։

— Այո,—բացագանչեց բժիշկը վրդովված ու լռեց.

Միչմանը հարցրեց.

— Կարելի է տեսնել հիւանդին։

— Օ, խնդրեմ, խնդրեմ,—կրկնեց բժիշկը, բայց նախազգուշութեամբ աւելացրեց.—միայն թէ՝ խօսակցութեան ժամանակ նրա՛ Իզմերայ պէտք է անուանել։

— Լաւ,—համաձայնեց նրա խօսակիցը։

Երբ նրանք մտան հիւանդի սենեակը, սա կռացած նստել էր սեղանի առաջ և Աւետարան էր կարդում։ Տեսնելով ներս մտնողներին, նա վեր կացաւ տեղից և, երեսը դարձնելով դէպի եկողները, բարի ժպիտով ու քաղաքավարութեամբ բարևեց գլխով։

— Դուք ինձանից այլևս չէ՞ք վախենում,—խօսեց նա։—Ես հիմա սարսափելի չեմ. ես երդվել եմ Նրա առաջ, Յիսուսի առաջ,—ասաց հիւանդը ժպտալով։

Միչմանը աչքը չէր հեռացնում նրանից։ Դա բարձրահասակ, նուրբ կազմուածքով մի տղամարդ էր, սև աչքերով և կուպրի պէս սև կոշտ մազերով, որոնց միջից սպիտակ թելեր էին երևում։

— Քանի՞ տարեկան է սա,—կամացուկ հարցրեց միչմանը բժշկին։

Բայց հիւանդը բժշկի տեղ պատասխանեց.

— Իմ երկրորդ ծննդեան օրից անցել է արդէն 52 տարի,—ասաց նա ու բարեսրտութեամբ ժպտաց։

— Իզմերայ,—խնդրեց նրան բժիշկը,—ցոյց տուէք հիւրին ձեր ձեռքերը։

Հիւանդը սիրալիր կերպով մեկնեց երկու ձեռքը, և միչմանը շատ որոշակի տեսաւ ափերի մէջ երկու վէրք, մեխի հետքերի նման։ Միչմանը սարսափեց։ Նրա մարմնով սարսուռ անցաւ։

— Դուք էք Քրիստոսի հետ Գողգոթայի վրա խաչված աւազակ Իզմերայը,—[illegible] հարցրեց նա հիւանդին։

— Այո,—պատասխանեց հիւանդը բոլորովին [illegible]։

— Դուք լաւ յիշում էք այդ օրը Գողգոթայի վրա,—նորից հարցրեց միչմանը։

— Օ՜, այո, շատ լաւ։

— Բայց դուք յիշում էք Կարսի կռիւը, որին ինքներդ մասնակցել էք։

— Ոչ. դրա մասին ես արդէն մոռացել եմ. բայց այդ պիտի կատարվի երևի շատ ուշ,—աւելացրեց նա մտածմունքով։

— Իսկ Քրիստոսի արտաքինը դուք յիշո՞ւմ էք,—հարցրեց միչմանը։

— Ես հէնց այժմ տեսնում եմ Նրան, այնպէս, կարծես թէ առաջս կանգնած լինի։

— Դուք միասին բարձրացաք Գողգոթա։

— Ոչ, մենք այնտեղ խաչի մօտ սպասում էինք, երբ Նրան բերին։

— Ասում էք՝ «մենք». ովքե՞ր են «մենք»-ը։

— Ես՝ Իզմերայս և միւս դատապարտեալը՝ Ամվրին։

— Դա երկրորդ աւազակի անունն է։

— Այո,—պատասխանեց նա, կարծես իր լաւ բարեկամի մասին լինէր խօսքը։

— Նկարագրեցէք ինձ, խնդրեմ, Քրիստոսի արտաքինը։

— Նա միջահասակ էր, բարակ, ոսկէ գանգուր մազերով, կապոյտ աչքերով, հրաշալի գեղեցկութեամբ...

— Ի՞նչ էր նա հագած։

— Սպիտակ շապիկ՝ առանց կարի. իսկ վրան ձգել էր դեղնագոյն պատմուճան,—պատմում էր հիւանդը հաստատ համոզմունքով։

— Նրան շա՞տ էին չարչարել։

— Այո, բայց նա պահում էր իրան՝ թագաւորի նման։ Ազատ, հաստատ և գեղեցիկ։

— Բայց և այնպէս՝ նրա դէմքի վրա հարուածների հետքեր կային։

— Շատ։ Ըստ երևոյթին հռոմայեցի լեգէոնները ծեծել էին նրան մտրակներով՝ ծայրերին արճճէ գնդակներ կապած։

— Իսկ ձեզ չը ծեծեցին լեգէոնները՝ խաչելուց առաջ։

— Գողգոթայի վրա՝ ոչ։ Իսկ ես յիշում եմ միայն Գողգոթան։

Միչմանը հարցրեց.

ոյժով մահմեդական դարձածներ։

Այրումները կրօնական այն մոլեռանդութիւնը չունեն, ինչ որ ուրիշ տեղի մահմեդականները։ Դէպի կրօնն ու կրօնական ծէսերը շատ անտարբեր են։ Նոյնիսկ ամբողջ գաւառամասում աղօթատուն չունեն։

Երբ ես այս առիթով նրանց նկատողութիւն էի անում, նրանք ինձ պատասխանում էին. «Սրի ոյժով մահմեդական դարձած ժողովրդից ինչ աղօթատուն, ինչ աղօթք պէտք է պահանջել»։

II

Ներկայ յօդուածը վերջացնելով՝ կարեւոր եմ համարում հայ ինտելիգենցիայի ուշադրութիւնը հրաւիրել մի նշանաւոր հանգամանքի վրայ։

Մեր տարաբաղդ ազգը դարեր շարունակ մահմեդական անարգ լծի տակ գտնվելով իրանից ստուար հատուածներ է տուել տիրող ազգութիւններին։

Կովկասի որ անկիւնն էլ մտն գալու լինենք, Թուրքերի, քիւրդերի, լեզգիների և այլ ազգերի մէջ մենք կը գտնենք քաղաքական դժբաղդ հանգամանքների բերմամբ մեզանից անջատված և այժմ բոլորովին օտարացած հայ եղբայրներին։

Նոյնպիսի օտարացած եղբայրների մենք կը հանդիպենք և Պարսկաստանի, Աւղանիստանի և Անդրկասպեան երկրի խորքերում։

Ի՞նչ եղան տիեզերքի պատուհաս Լանկթամուրի կողմից գերված 90,000 տուն աղուանները։ Արդեօք այժմեան աղուանները այդ գերի տարված աղուանների սերունդը չե՞ն հանդիսանում։

Մեր հայ ինտելիգենցիայի սրբազան պարտականութիւնը թող լինի մօտ գնալ մեր այդ տարաբաղդ եղբայրներին, նրանց մէջ գիտակցութիւն զարթեցնել, որ նրանք, չը նայելով մեզանից կրօնով տարբեր լինելուն, դարձեալ մեր արիւնակից հայ եղբայրներ են և թէ նրանք գուցէ կոչված են մի մեծ գաղափարի իրականացման միջնորդներ հանդիսանալու, այսինքն նրանք կրօնով մահմեդական և ծագումով հայ լինելով՝ կոչված են հայ և մահմեդական ազգութիւններին եղբայրութեան և համերաշխութեան հրաւիրելու։

Ինչքն վրացի ինտելիգենցիան Պարսկաստան քարոզիչներ կուղարկէ՝ այնտեղ գտնված մահմեդական վրացիների մէջ ազգային գիտակցութիւն զարթեցնելու համար, ինչքն նա նոյն ուղղութեամբ ես կը գործէ Կովկասում ափխազների, լազերի, Բօրչալուի և Բաթումի շրջանի թիւրքերի մէջ, և այդ ասպարէզում վրաց ինտելիգենցիան առաջ կը գնայ, որ մինչև անգամ Թիֆլիսում մահմեդական վրացիներին միացնելու համար ժողով կը կազմէ, իսկ մենք հայերս, որ աւելի մեծ թւով հատուածներ ենք տուել, պէտք է այդ կողմից յետ մնանք վրացիներից։

Լաւ է ուշ, քան երբէք։ Թող հայ գիտա[illegible] և ձեռնհաս հասարակութիւնը գործէ [illegible] ուղղութեամբ և հաւատացած լինի, որ [illegible]քանչիւր բարի գործ անպատճառ հետեւողներ և համակրողներ կունենայ։

Տողերիս հեղինակը քանի-քանի ինտելիգենտ Թուրքերի է հանդիպել, որոնք խոստովանում են իրանց հայկական ծագումը և իրանց պապերի՝ սրի ոյժով մահմեդականութիւն ընդունելը։

Մահմեդականներին մի կողմ թողած՝ մեծ ուշադրութեան արժանի են եզիդի քիւրդերը, որոնք իրանց այնչափ մօտ են համարում հայերին, որ իրանց և հայերի միջի տարբերութիւնը «սոխի կեղևի» պէս բան են համարում և ցանկութիւն են յայտնում, որ այդ կեղևը պատռվի և իրանք միանան հայերի հետ։

Այս բոլորն աչքի առաջ ունենալով՝ ես համոզված եմ, որ եթէ մեզնից օտարացած մեր այդ նախկին հայերի հետ մերձեցման ջանքեր գործ դրվեն, անպայման[illegible]աւոր հետեւանքների կը հասնենք։

Ց. Վարդանեան

— Ձեզ պատահել արդեօք դուք՝ երբևիցէ ձեր կեանքի մէջ՝ օֆիցեր Դէմիան Պետրովիչ Նուրալիմբէկին։

Հիւանդի դէմքի վրայով կարծես մութ ամպ անցաւ։ Ըստ երևոյթին նա մեծ ջանք էր գործ դնում յիշողութիւնը վերականգնելու։ Նրա սև մօրուքը երբեմն կարծես ցնցվում էր այդ ջանքերից։

— Ո՛չ,— պատասխանեց նա հառաչելով։— Այդպիսի մարդու չեմ պատահել ոչ մի անգամ։

— Դուք գիտէք որ հիւանդ էք,— անակնկալ կերպով հարցրեց նրան միջմանը, կարծես ուզում էր այդ հարցով նրան յանկարծակիի բերել։

Հիւանդը շփոթվեց, բայց և իսկոյն պատասխանեց.

— Գիտեմ։ Երբեմն միտքս պղտորվում է, և այդ առիթով բժշկի հետ մենք վիճաբանութիւն ենք ունենում։

Նա ժպտաց։

— Վիճաբանութիւն. ինչ բանի մասին։

— Ես հաստատում եմ, որ ես հիւանդացայ Գողգոթան յիշելուց վերջը։

— Իսկ բժիշկը։

— Իսկ բժիշկը պնդում է, որ ես հիւանդանալուց յետոյ յիշեցի Գողգոթան։ Մեծ տարբերութիւն կայ, այնպէս չէ։

— Ես այլևս չեմ պնդում այդ,— պատասխանեց բժիշկը։— Այժմ ես ինքս էլ չը գիտեմ, թէ ուր է ճշմարտութիւնը։

Հիւանդը յանկարծ աւելացրեց.

— Բայց հիմա ես կը խնդրէի ձեզ և բժշկին՝ թողնել ինձ մենակ։

— Դուք պիտի աղօթէք Աստուծուն, Իգմերայ,— հարցրեց բժիշկը։

— Այո, ի հարկէ. պէտք է ներումն աղերսել իմ հայհոյանքների համար Փրկիչ Յիսուսից՝ Նրա տանջանքի ժամերին։ Այո, այո։

Բժիշկը և միջմանը շտապով դուրս եկան։

Հազիւ դուռը ծածկվեց նրանց ետևից, երբ նրանց ականջին հասաւ հիւանդի տխուր ողբը.

— Յիսուս, կենդանի Աստուծոյ Որդի, գթա ինձ վրան ողորմութեան Քո. Յիսուս, Որդի՛ Աստուծոյ։

Բժշկի դէմքը խոժոռվեց։

— Գնանք այստեղից, հիմա Իգմերայը կը սկսէ լալ ու ոռնալ վիրաւորված գայլի նման։ Դա արդէն սարսափելի է։ Դուռը կողպիր բանալիով,— ասաց բժիշկը պահապանին։

Դռան ետևից արդէն լսվում էր Իգմերայի լացը՝ փոքր ծանր հեծկլտի պէս։

— Իրաւ, որտեղից են առաջացել հիւանդի ձեռքերի ու ոտքերի վրայի վէրքերը։

— Որտեղից։ Հաւանական է, որ երևակայութեան լարված գործողութիւնից. բայց շատ կարելի է... գուցէ նա իսկապէս եղել է Իգմերայը...

— Ի՞նչ էք ասում, բժի՛շկ։

— Ի՞նչ է։ Մի՞թէ մենք ամէն բան գիտենք մարդու մասին։ Ո՞վ է նա, որտեղից է, ուր է գնում։ Մի՞թէ այդ բոլոր հարցերը խորապէս պարզել է գիտութիւնը։ Օ՜, այդ դեռ պիտի պարզվի ապագայում։

— Այդ դէպքում ինչպէս էք բժշկում Իգմերային։

— Շատ [illegible]սարակ կերպով։ Փորձում եմ սպանել Նրա մէջ անցեալը և վերականգնել ներկան։ Ոչնչացնել [illegible]ա մէջ Իգմերային և վերստեղծել Նուրալի[illegible]էկին,— բացատրեց բժիշկը։

Եւ նրանք բաժանվեցին։

Միջմանը այլևս չը պատահեց ոչ [illegible]ժշկին, ոչ էլ Իգմերային...

Ո՞ւր է հիմա նա. կենդանի է արդեօք։

Տիկ. Սիրանոյշ Գ.

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Կեանքը Ճօճկանում

Ճօճկան (Բօրչ. գաւ.), 10 յուլիսի

Գիւղը մեծացել և մեծանում է. բնակչութեան թիւը տարէ-տարի աւելանում է, իսկ խմելու ջրի կարիքը աննկարագրելի է դառնում։ Ամառվայ խիստ, սաստիկ շոգերին՝ արևի կիզիչ ճառագայթները կլանում են եղած ջրի կաթիլները և ջրի պակասութեան պատճառով առաւօտից մինչև երեկոյ խմելու ջրի համար տեղի են ունենում տուր ու դմփոց, հայհոյանք և մի շարք անախորժութիւններ։

Գիւղի շրջակայքը լիքն է քաղցրահամ, և սառն աղբիւրներով, որ ամենայն հեշտութեամբ կարելի է բերել գիւղ։ Այս առիթով, ասում, խօսում են հէնց միայն այն ժամանակ, երբ ամարային կիզիչ արևի ճառագայթների տակ եղած ջուրը ցամաքում է, բայց հէնց որ անցնում է ամառը, «էլի էն ջուրը, էլի էն ջրաղացը»։

Մեզանում կատարեալ ամառ է, շոգը այրում, խորովում է ամէն ինչ։ Խոտի հունձը վերջացած է, գարու հունձը սկսված. եղանակները եթէ մի քանի օր էլ այսպէս շարունակվեն, շատ կը հնձվի և ցորենը։

Անասունների և մարդկային հիւանդութիւն դեռ ևս չը կայ։ Շ. Կ.

Նորութիւններ Վաղարշապատից

Վաղարշապատ, 13 յուլիսի

Ամսիս 8-ին տեղիս քարահանքում պատահեց հետևեալ տխուր դէպքը։

Տեղիս քարհատները սովորական ձևով աշխատելիս են լինում քարահանքում իւրաքանչիւրը իր մասում. աշխատելիս է լինում նաև ուստաբաշի Մակար Մաչեանը։ Վերջինս գործ է ունենում մի մեծ քարի հետ։ Մենակ բաւականին աշխատելուց յետոյ յանկարծ քարը ընկնում է և խեղճ արհեստաւորին տակովը անում և անշնչացնում։ Լուրը կայծակի արագութիւնով տարածվում է, ընկերները վազում են օգնութեան, բայց երկար աշխատելուց յետոյ հազիւ հայ դիակն են հանում։ Հանգուցեալը 52 տարեկան լաւ արհեստաւոր, բարի ու ազնիւ մարդ էր, յարգված իր պաշտօնակիցներից և համագիւղացիներից։ Հանգուցեալը թողեց կին և երեք անչափահաս որբեր։

Վաղարշապատը ունի լաւ, արգաւանդ և պտղաբեր հողեր, որոնք ջրի պակասութեան պատճառով ոչ մի դէպքում օգտաւէտ չեն լինում տեղացիներին։ Ամէն մի մարդ գարնան սկզբից մինչև աշնան վերջը իր քրտինքով աշխատում է և իր օրական պարէնը հայթայթում. բայց ամառվայ տաք արևը, ջրի պակասութիւնը և զանազան պատուհասները՝ կանաչ արտերը և պտղատու ծառերն ու այգիները իրանց տեսքից քցում են, երբեմն չորացնում ու անբերրի դարձնում։ Այս ամէնը խեղճ գիւղացու մէջքը կոտրում է։ Այգիները ջրվում են շատ անգամ 60—70 օրը մի անգամ, իսկ ցանքը՝ 15—20 օրը։

Ամսիս 7-ին առաջին անգամ սկսվեց Հրազդանից ջուր գալ այն ջրանցքով, որը պիտի ջուր մատակարարէր Վաղարշապատ, Ալիբէգլու և Զօրանքեարա գիւղերին։ Շատ ուրախալի էր տեսնել, թէ ինչպէս ալիբէգլուեցիք ընդառաջ եկան իրանց ջրին դափ ու զուռնայով և մեծ ուռաներով։

Վ. Ք. Աղաջանեան

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԳՈՐԾԸ ՍՕՃԻ ՇՐՋԱՆԻ ԳԻՒՂԵՐՈՒՄ

Շրջանիս եկ.-ծխ. դպրոցներում ուսումնական տարին վերջացած պէտք է համարել։ Հաշիւ տալու համար հարկաւոր է մի յետադարձ հայեացք ձգել։

Այս շրջանն ունի 16 ծխական դպրոց, բայց չէ կարելի յիշատակել մի ուսումնական տարի, որ բոլոր դպրոցներումն էլ դասաւանդութիւն լինի։ Բաց դպրոցների թիւը ամենաբարեյաջող տարին 9-ի—10-ի շըրջանից այն կողմը չէ անցնում, այն էլ կարծես հերթով։ Մի դպրոց մի քանի տարի միմեանց վրա բաց՝ հազուագիւտ երևոյթ է. նաև այն, որ բացված դպրոցը մինչև տարվայ վերջը կեանք ունենայ։ Առանձնապէս այդ կողմից նշանակալից է այս ուսումնական տարին։

Բաւական է միայն մի թռուցիկ հետաքրքրութիւն, և դուք կը տեսնէք, թէ որքան անպտուղ են անցել այն թանգագին ժամերը, որ մատաղ սերունդն անց է կացրել իր դպրոցական կեանքում, և որքան աննպատակ են կորչում այն կոպէկները, որ գիւղացիութիւնը իր մանուկ սերնդի դաստիարակութեանն է նուիրում։

Հսկողութեան բացակայութեան և տեղական պայմանների շնորհիւ ուսուցչական ասպարէզը, այս շրջանի շատ գիւղերում, այնպիսի անձնաւորութիւնների է մնացել (մի կողմը թողած բացառութիւնները), որոնք ոչ թէ գալիս են այստեղ գաղափարական դրօշը ձեռքին գիտութիւն, լոյս սփռելու և կեանքը դիւրացնելու՝ նոր ճանապարհներ գիւղացիներին ցոյց տալու, այլ սերմանելու թերահաւատութիւն դէպի դաստիարակութիւնը, դէպի կրթութիւնը։

Ուսուցիչ, այս շրջանում, ամէն արհեստի, ամէն կարգի մարդ կարող է լինել, միայն բաւական է որ քիչ գրել կարդալ կարողանայ։ Էլ թերուսներ, ոչ մի ասպարէզում աջողութիւն չը գտած անձնաւորութիւններ՝ այստեղ ուսուցչական պաշտօն են վարում, մանուկ կրթում։ Սկսած ուսանողից, որ փող է փնտռում, մինչև փողրթչի, խանութպան։ Եւ այդ խայտաբղէտ ուսուցչական տարրի հետ և խայտաբղէտ երևոյթներ, և դասաւանդութիւն։

Մի գիւղում ուսուցիչն ուսումն. տարվայ կէսին ամուսնանալով և դրանով ապահով կեանք ստեղծելով՝ երեսի վրա է թողնում մանուկ սերնդի դաստիարակութեան գործը և հեռանում այլ ասպարէզում բաղդ որոնելու. մի ուրիշ գիւղում ուսուցիչը ուսումնական տարին վերջացնում է ապրիլի երկրորդ կէսին։ Թէ ինչու։ Ունի իր պատճառները։ Որովհետև այդպէս է պայմանաւորվել և ինքն էլ գործ ունի։ Երրորդում ուսուցիչն ինչ-որ անբացատրելի պատճառով թողնում է դպրոցը, առանց մէկին[illegible]բան յայտնելու հեռանում, այն էլ ուսումն. տարուց երկու ամիս չանցած։ Մի չորրորդ տեղում ուսուցչի և հոգաբարձութեան միջև դրամական հաշիւների պատճառով վէճ ծագելով՝ ուսուցիչը եկեղեցու և դպրոցի հիմնադիրների յիշատակը հայհոյելով դպրոցը փակում-հեռանում է։ Այս ուսումնական տարում 10 դպրոցում դասաւանդութիւն է եղել, բայց ոչ մէկը անփորձ տարի չէ լրացրել, և ոչ մի գիւղ էլ չէ կարող ասել, թէ այս տարի կանոնաւոր դպրոց է ունեցել։ Մի տեղ հասարակութիւնը հէնց ինքը տարվայ կէսին ուսուցիչ է հրաւիրել, մի այլ տեղ նոյն միջոցին դպրոցը փակել։

Զարմանալի երևոյթ է ներկայացնում իւրաքանչիւր դպրոցում ընդունված ուսումնական ծրագիրը։ Չը կայ մի ընկալար իդէա. մշակված մեթօդների և ծրագրի բացակայութիւն. ամէն ինչ տակն ու վրա, կախված ուսուցչի և հասարակութեան քմահաճոյքից. մեր ծխական դպրոցների վերաբերմամբ չը նայած այլ վայրերում էլ խուլ դժգոհութիւն կայ, բայց այդ դժգոհութիւնն այս շրջանում աւելի նկատելի կերպով է արտայայտվում։ Այլ ես այն հաւատը, այն բարեհաճական վերաբերմունքը դէպի ծխական դպրոցը, դէպի ծխական դպրոցի ուսուցիչը չը կայ։ Այդ՝ մասամբ երևում է գիւղացիների դպրոցական տուրքերը չը վճարելուց կամ վճարել խուսափելուց։ Մի ժամանակ սիրով 50 րուբլի դպրոցական տուրք վճարողը այժմ 5 ր. դժուարութեամբ է վճարում կամ բոլորովին հրաժարվում վճարելուց, չը նայած որ այժմ գիւղացիների տնտեսականը համեմատաբար աւելի բարւոք է, քան առաջ։

Ի՞նչպէս դուրս գալ այս քաօսային դրութիւնից. ինչպէս բարձրացնել շրջանիս դպրոցների վարկը և վերջապէս ինչպէս պահանջել հասարակութիւնից իր կիսախարխուլ դպրոցների համար զոհողութիւններ, երբ հասարակութիւնը տգէտ է, իսկ դըպրոցներն էլ բաղդի կամքին թողնված։ Ահա հարցեր, որոնց բարեյաջող ընթացք տալը կախված է մեր Աստրախանի թեմական առաջնորդի՝ դպրոցների վրա մօտիկից հսկողութիւն ունենալուց և թեմական տեսուչներ նշանակելուց։ Իսկ այժմ հսկողութեան մասին խօսք անգամ չէ կարող լինել, քանի որ այս շրջանի դպրոցներից շատերի հենց գոյութեան մասին Աստրախանի հոգևոր կառավարութիւնը տեղեկութիւն չունի և ամբողջ շրջանումն էլ ոչ գործակալ կայ, ոչ էլ մի շնորհքով քահանայ, որին կարելի լինի գործը յանձնել։

Ց. Շ.

Սօչի

ԱՍԽԱԲԱԴԻ ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Կարդալով Բագուի «Արև» թերթում մի շարք յարձակումներ տեղիս Հայուհեաց Բարեգործ. Ընկ. հասցէին, որպէս նորեկ և հետաքրքրվող հայ հասարակական կեանքով պարտականութիւն համարեցի մօտիկից ծանօթանալ այդ Ընկ. գործունէութեանը՝ գաղափար կազմելու համար յիշեալ յարձակումների անաչառութեան մասին։ Դժբաղդաբար՝ մեր ծանօթութիւնից յետ յիշեալ Ընկ. գործունէութեան, եկանք այն եզրակացութեան, որ այդ յարձակումների գլխաւոր շարժառիթը անձնական է։

Ամբողջ Ռուսական Թուրքեստանի հայաբնակ քաղաքների մէջ Ասխաբադը իրաւունք ունի պարծենալու իր Հայուհեաց Բ. Ընկ.-ով, որի հիմնադրութեան պատիւը պատկանում է տ. Մամիկոնեանին, մի հայուհու, որը իր տոկուն գործունէութեամբ, առանց աղմուկների, փող հնչեցնելու 13—14 տարուց ի վեր, համարեա անընդհատ, վարում է Ընկ. նախագահի ծանր պաշտօնը։

Թողնելով մի կողմ Ընկ. մանր օգնութիւնները չքաւոր դասին և աշակերտութեան, ես վերցնում եմ նրա գործունէութեան գլուխ-գործոցը՝ նրա դպրոցը, ուր սովորում են մօտ 350 աշակերտուհիներ, որոնցից մօտ 150-ը բոլորովին ձրի։

Դպրոցը չորս-դասեան է, առաջիկայ սեզոնից ունենալու է պրօգիմնազիական իրաւունք, հայերէնը պարտադիր է։

Ռուսաստանում դպրոցների սովը ակներև է ամէն մի ընթերցողի համար։ Այդ ո՞ր երեխայ ունեցողն է, որ ահագին մտատանջութիւն չէ քաշել՝ մինչև որ կարողացել է տեղաւորել իր երեխային որևէ միջնակարգ դպրոցում. չեմ յիշում այն դժբաղդների քանակը, որոնց համար ընդմիշտ փակ են դպրոցի դռները... Այստեղի օրիորդաց գիմնազիայի առաջին պատրաստականում տեղ կայ առաջիկայ սեզոնի համար ընդամենը, եթէ չեմ սխալվում, 40 հոգու, բայց խնդիր էին ներկայացրել և քննվել 85 հոգի, որոնցից միայն մէկն էր կտրվել։ Ի՞նչ դրութիւն է ստեղծվում այն՝ դուրս մնացած 39 հոգու համար։ Օտարազգիների համար դժուարութիւնները կրկնապատիկ են։ Ի՞նչ անէր Ասխաբադի հայը, ուր ուղարկէր իր աղջիկներին։ Գուցէ առարկեն ինձ՝ ծխական դպրոց։ Հեշտ է ասելը, բայց իրագործելն է խնդիր։ Հէնց այդպէս ասողին պէտք է հարց տալ. եթէ իր նիւթական միջոցները ներեն, ուր կուղարկէ իր որդուն. գիմնազիա՞ թէ հայոց ծխական դպրոց։ Պատասխանը պարզ է։ Ենթադրենք մի վայրկեան, որ Հայուհեաց Ընկերութիւնը դըպրոց չունի. պարզ է, որ ունևոր ծնողները իրանց աղջիկներին ծխական դպրոց չեն ուղարկի, այլ պէտք է աշխատեն կամ տեղական կամ ուրիշ քաղաքների պետական դպրոցները տեղաւորել։ Այդ դէպքում վնասը լինում է երկտակ։ Թէ նիւթապէս և թէ ազգային-ուսումնական։ Այն թոշակից, որ վճարվում է Հայուհեաց Ընկերութեան, ունևոր ծնողը շատ աւելին պէտք է վճարէ, և գլխաւորը՝ հայ աշակերտը պետական դըպրոցում ընդմիշտ խորթ պէտք է մնայ հայ լեզուին։ Բայց ինչ է եղել այն 150 աշակերտուհիների դրութիւնը, որոնք բոլորովին ձրի են սովորում և դեռ ոմանք առանձին օգնութիւն ստանում Ընկերութիւնից։ Արդեօք ծխականը կարո՞ղ է հոգալ դրանց մասին։ Այն ծխականը, որի հաշուետուութիւնից երևաց, որ տարվայ սկզբին եղած 130 աշակերտներից, մասնաւոր թոշակի պահպանման առիթով, տարվայ վերջին մնացել էին 100 աշակերտ։ Տարվայ ընթացքում դուրս էին եկել այդ աշակերտները և մտել պետական տարրական դպրոցներ, ուր ուսումը ձրի է։

Եւ ինչ աւելորդ ծախք է նստում Հայուհեաց Ընկերութեան դպրոցը հասարակութեան վրա։ Աշակերտների թոշակների գումարից բացի, զանազան երեկոյթներից, զբօսանքներից, վիճակախաղից, անդամավճարներից գոյացած ընդամենը 2000 րուբլով ծածկվում է դպրոցի ծախքը։ Այդ 2000 րուբլին էլ հասարակութիւնը յաւելումով է ստանում դպրոցից այլ ճանապարհով։ Եթէ վերցնենք պետական միջնակարգ դպրոցների ուսման վճարը և համեմատենք Հայուհեացի հետ, տարբերութիւնը 2000-ից շատ աւելի կը լինի։

Այս բոլորից կարելի է եզրակացնել, որ քանի որ հնարաւորութիւն չը կայ այլ ձևի դպրոց պահել, ուր ամենայն մասամբ ապահովված լինեն թէ «հայ կրթութիւնը» և թէ միաժամանակ պետական կրթութիւնը, այդպիսի հանգամանքներում գոյութիւն ունեցող մի հայկական դպրոց պրօգիմնազիական իրաւունքներով բարիք պէտք է համարել Անդրկասպեան անապատում ապրող մի բուռ հայութեան համար։

Իմի

Ասխաբադ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ «Бакуъ»-ն յայտնում է, թէ [illegible]

Վօրօնցօվ-Դաշկով այս օրերս վերադառնում է Կովկաս։

◆ Թիֆլիսում տեղեկութիւններ են ստացվել, որ Վրաստանի էկզարխ նշանակված եպիսկոպոս Պիտիրիմը Թիֆլիս է գալու օգոստոսի 3-ին։

◆ Փոխ-նահանգապետը հրատարակել է հետևեալ պարտադիր որոշումները մսավաճառների մասին. «Մսավաճառները պարտաւոր են միսը ծախել որոշած սակագնով, եթէ այդպիսին գոյութիւն ունի որոշված կարգով։ Իսկ երբ պարտադիր սակագինը վերացվում է նոյն կարգով և գոյութիւն չի ունենում, այն ժամանակ թոյլ է տրվում միսը ծախել ազատ գնով, բայց անպայման տեսակներով և առանց սակարկութեան՝ մսավաճառների նախօրօք որոշած գներով՝ ամէն մի տեսակի մասին առանձին, ըստ որում ցուցահանված գները չը պէտք է աւելացվեն մի օրվայ ընթացքում։ Գների ցուցակը կախված պիտի լինի ամէն մի մսավաճառանոցում, աչքի ընկնող տեղ։ Մսավաճառները պարտաւոր են գնորդների հետ վարվել քաղաքավարի և բնաւ թոյլ չը պիտի տան հայհոյական ու անպատկառ խօսքեր և անպայման պէտք է ենթարկվեն քաղ. վարչութեան և քաղ. առողջապահական պաշտօնեաների օրինական պահանջներին։ Ամէն մի մսավաճառանոցում կշռաքարերը պէտք է դրոշմված լինեն»։ Ներկայ պարտադիր որոշումները արդէն իրանց ոյժի մէջ են։

◆ Առանձին կազմված ժիւրին հաւանութիւն է տուել Լերմոնտովի արձանի ուրուագծին, որը կազմել է նկարիչ Գ. Ի. Կեպինով։ Արձանը արժենալու է 3,500 ր.։ Քաղ. վարչութիւնը ցանկութիւն է յայտնել բանաստեղծի արձանը կանգնեցնել ոչ թէ Ալէքսանդրեան այգում, ինչպիսի մտադրութիւն կար առաջ, այլ այնտեղ, ուր Լերմոնտովսկայա և Գուդովիչյա փողոցները միանում են իրար։

◆ Էքսկուրսիայով Թիֆլիս են եկել Տուլայի, Մոսկվայի և Օրլովի նահանգների քաղաքային ու տարրական դպրոցի աշակերտներ՝ Տուլայի քաղ. դպրոցի դասատու Ապուխտինի ղեկավարութեամբ։

ԿՈՎԿԱՍ

◆ Պետերբուրգի Հեռ. Գործ. Բագուի թղթակիցը հաղորդում է գործակալութեան, որ մինչև յուլիսի 10-ը արդիւնարանների գործադուլաւոր ծառայողների թիւը հասնում էր 22,000-ի, իսկ գործադուլի պատճառով ձերբակալվածների թիւը 765-ի։

◆ Գրօզնիից յայտնում են, որ յուլիսի 15-ին այնտեղ հանդիսաւորապէս բացվել է Թիֆլիսի առևտրական բանկի բաժանմունքը։

◆ Բուսաբանական այգու մասնագէտ Կուսնիս այս օրերս գնաց Ախալցխայի և Ախալքալաքի գաւառները, որտեղից գնալու է և պարսից ու թիւրքաց սահմանները, նաև Գանձակի նահ. հարաւային կողմը կերի վայրի խոտեր հաւաքելու և նրանց կուլտուրական մշակութեան ենթարկելու նպատակով։

◆ Բագու է վերադարձել քաղաքագլուխ Լ. Լ. Բիչը և ստանձնել է իր պարտականութիւնները։

ՌՈՒՍԱՍՏԱՆ

◆ Ինչպէս յայտնում են, Մոսկվայի չեխերի միջև մեծ յուզում է տիրում։ Մեծամասնութիւնը, չը նայած զինուորական ծառայութիւնից հրաժարվելու պատասխանատւութեան, Ձեխիայում տիրող մեծ յուզմունքների մասին եղած տեղեկութիւնները ի նկատի ունենալով, յուզմունքներ, որ սպառնում են ապստամբութեան փոխվել,— որոշել են հայրենիք չը վերադառնալ։

◆ Հանգուցեալ իշխ. Մեշչերսկիի կտակի համաձայն դադարեցվում է «Гражданинъ» թերթի հրատարակութիւնը։

◆ Մի յայտնի սանօվնիկ ժուռնալիստների հետ ունեցած զրոյցի ժամանակ յայտնել է, որ Ռուսաստանի դիպլօմատիական դերը վերջացաւ և որ Ռուսաստանը գտնվում է մեծ անցքերի նախօրեակին։

◆ Զինուորական մինիստր Սուխոմլինով, Ծարսկոյէ-Սէլոյից վերադառնալով, ուր տեղի էր ունեցել կարևոր խորհրդակցութիւն, կարևոր կարգադրութիւններ արաւ։

◆ Վերջին հեռագիրը յայտնում է, որ Պետերբուրգի բոլոր գործարաններում աշխատանքները վերսկսված են։ Որոշված է ոչ մի բանւորի չը հեռացնել գործից։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՎՐԱՑ ԽԻԱՆՈՒԹԻՒՆԻՑ

◆ Այսօր, ամսիս 17-ին, կայան[illegible] է Վրաց Գիւղ. Ընկ. նիստը, Ընկ. [illegible] տարվայ հաշիւը և գիւղատնտեսներ[illegible] ու ինստրուկտորների գործունէութ[illegible]ը քննելու։

◆ Ժողովականների գի[illegible]զիայի հրաժարված տեսուչ Ա. Վ. Մ[illegible]վանիի տեղ հրաւիրվում է Խոնիի ուս[illegible]չական սեմինարիայի տեսուչ Ա. Ձիչին[illegible]է, որը 20 տարի առաջ վերատեսուչ [illegible]ղել նոյն ավինսւական[illegible]ների դպրոցի, [illegible] այժմ վերափոխվել է գիմնազիայի։

◆ Վրաց[illegible] Թիֆլիսի Գիւղատնտ. Ընկերութիւնը [illegible]ախէթի Իկալտօ գիւղում կազմում է փորձ[illegible]կան պտղատու այգի, որի համար արտա[illegible]սահմաններից ապսպրված են 15,000 պտ[illegible]տատու վայրի ծառեր։ Ներկայումս Ընկ. [illegible]խատում է պատուաստի համար նիւթեր [illegible]

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Շօշ գիւղ (Շուշու գաւ.), 10 յուլիսի

Յունիսի 26-ին Շուշու գաւառի Շօշ գիւղում, ներկայութեամբ Ղարաբաղի թեմի հայ եկ.-ծխ. դպրոցների տեսուչ Գ. Հայկունու, տեղի ունեցաւ խորհրդակցական ժողով, նոյն գիւղում ծխ. դպրոց բաց անելու նպատակով։ Գ. Հայկունին բացատրեց ընդհանրապէս հայ դպրոցի անհրաժեշտութիւնը և օգտակարութիւնը։ Հայկունու խօսակցութիւնից յետոյ, ժողովի անդամները միախորհուրդ յայտնեցին, որ մեծ հաճոյքով կը ցանկանային ծխ. դպրոց ունենալ, եթէ պետական 5 բաժանմունքից բաղկացած դպրոցը չը լինէր, որի գոյութեան համար վճարում են տարեկան 1200 ր. և բացի դրանից նաև տալիս են պետ. տուրք։ Ուրեմն պարզ է, որ ժողովուրդը այլ ևս չէ կարող մտածել ծխ. դպրոց բաց անելու մասին։ Այսպիսով ժողովը ցրվում է, ոչ մի բաւարար հետևանք չունենալով։

Ինչպէս ուրիշ գիւղեր, նոյնպէս և մեր գիւղը ունի Ռուսաստանի զանազան քաղաքներում շատ հարուստ մարդիկ։

Ցանկալի կը լինէր, եթէ մեր գիւղի այդ հարուստ մարդիկ, որոնք ապրում են քաղաքներում, դպրոցական այդ սուրբ գործի համար նպաստ յատկացնէին նաև մեր գիւղում հայ ծխ. դպրոց բաց անելու համար։ Մեր գիւղը, Ղարաբաղի մեծ և հին գիւղերից մէկը լինելով, ամենից առաջ պիտի ունենար և ցանկալի է, որ ունենայ իր ծխ. դպրոցը։ Իբրև քաղաքից մօտիկ գիւղ, պէտք է աւելի զարգացած, լուսաւորութեան ուղին մտած, հայ լեզուն աւելի ջերմ պաշտպանող լինի, քան թէ միւս շրջակայ գիւղերը։

Այժմ ի գիտութիւն մեր գիւղի հարուստ մարդկանց և ընդհանրապէս ամենքին յայտնում ենք, որ մեր գիւղը թէ ուսման և թէ զարգացման տեսակէտից յետ է մնացած միւս հայ գիւղերից, մանաւանդ գիւղական բարբառը վաղուց արդէն ծաղրի է ենթարկվել շատ տեղեր։ Սակայն եթէ լինէր հայ ծխ. դպրոց, ի հարկէ լաւ կաւանդվէր հայոց լեզուն և գոնէ փոքր ի շատէ այդ բարբառը կը մաքրվէր և կամաց-կամաց հանդէս կը գար աշխարհաբար-գրական լեզուն։

Կրկնակի կը ցանկանայինք, որ մեր գիւղի հարուստները մտածէին իրանց գիւղի յետամնացութեան մասին և բարեհաճ ցանկութեամբ նպաստ շնորհէին, գիւղում առաջիկայ սեպտեմբերին ծխ. դպրոց բաց անելու համար։

Ուսուցիչ՝ Աւետիս Տէր-Պետրոսեան

ՀԱՅ ԿԵԱՆՔԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆ.

ԳԱՂԹԱՅԻՆ ՑԱՒԵՐԷՆ

Ուստր (Ամերիկա), 10 յուլիս (ն. տ.)

Քիչ անգամ հանրային ուշադրութիւնը լրջօրէն հրաւիրուած է այն տխուր վտանգին վրայ, որ կը սպառնայ ամերիկահայ նորահաս սերունդի ազգայնական փճացումին։

Մեր հանրային գործիչներն ու առաջնորդները, որոնք այս թէ այն կերպով ժողովուրդը հովուելու կոչուած են և անոր բարոյական պէտքերուն ծառայելու տրամադրուած, անուշադիր թողած են ամերիկահայ նոր սերունդին կորուստ սպառնացող այս կարևոր հարցը, և անհոգ ու դատապարտելի անփութութեամբ մը ձգած են, որ նոր սերունդը՝ իր հասկցած ու ըմբռնած եղանակաւ՝ շարունակէ իր ճամբան մութ և վտանգալից արահետներու մէջէն…

Ամերիկահայ մամուլն ևս անդրադարձած չէ այս կարևոր հարցին, հարց մը, որ՝ բաղդատաբար ազգային այլ և այլ խնդիրներու՝ էն կարևորագոյնն է, որուն յաջող լուծումէն կախուած ունի վաղուան սերունդը հայ մեծցնելու և հայ պահելու կարելիութիւնը։

Սերունդ մը կայ հոս—և, պէտք է ըսել, ստուարաթիւ սերունդ մը—որ բացարձակապէս օտար կը մեծնայ, զուրկ ոևէ ազգային դրոշմէ և ցեղային լաւագոյն յատկանիշէ։ Այս սերունդը, շատ չանցած, գուցէ իր հայ ըլլալը մոռնայ, լաւ ևս՝ ուրանայ, ինչպէս պատահած են մեզ այսպիսի օրինակներ, որոնք բացառիկ երևոյթներու շարքէն անցած՝ սովորական դէպքեր դարձած են։ Իրողութիւններ են ասոնք, ցաւալի իրողութիւններ, որոնց առջև պէտք է կանգ առնել և մտածել դարմանին համար։

Ամերիկահայ նոր սերունդը ազգային ոգիով մը կրթել պէտք է, անոնց մատաղ սրտերուն մէջ, ուր այժմ հայութիւնը ոչինչ դրած ունի, դրոշմելու է հայութեան ու հայրենիքի սէրը, հայ լեզուի և հայ ազգ. պատմութեան ու եկեղեցւոյ սէրը, որպէսզի կարենան հայ մեծնալ և հայ մնալ։ Այս պարտականութիւնը ըմբռնող շատ քիչեր կան ամերիկահայ գաղթականութեան մէջ, իսկ մի այսպիսի կարևոր դեր ստանձնող մարմիններ ու անհատներ հազուագիւտ են։ Ահա թէ ինչ ահաւոր վտանգ է, որ կը սպառնայ հայ գաղթականութեան կեանքին։

Հայ եկեղեցին, որ կրնար այս վտանգին առջև [illegible] թումբեր կանգնեցնել և մեծ ծառայութիւններ մատուցանել, իր ներկայ պայմաններու մէջ շատ քիչ բան կրնայ ընել, թէև աւելի ընելու բաղձանքը [illegible] և տրամադրելի հայ եկեղեցիին ոյժերը անբաւական են այս վտանգին առջև առնելու, որովհետև նախ՝ [illegible] թականը կը պակսի, երկրորդ, որ ամենէն կարևորն է, չունի բարոյական այն ոյժը, որ կը բղխի կարող եկեղեցականներու ձեռնհասութենէն. Անձնուէր, անշահախնդիր ձեռնհաս եկեղեցականներ, մշակուած [illegible] ու [illegible]նիւ հոգիով, շատ քիչ կան Ամերիկայի մէջ. այս է պատճառը, որ հայ եկեղեցին անզօր է նոր սերունդը ազգային տեսակէտով փճացումէ փրկելու։

Հայ դպրոցը, որ նոյնպէս ունի խոշոր դեր, գրեթէ գոյութիւն չունի։ Ամերիկայի Միացեալ Պետութիւններու այլևայլ կողմերն հաստատուող հայ գաղութներու թիւը տասնեակներու կը հասնի, բայց հազիւ թէ գտնուին տասնի չափ հայ դպրոցներ, ուր օրուան մէջ մէկ ժամ հայերէն դասաւանդութիւններ ըլլան հայ մանուկներու։

Բարոյական ամենամեծ պատասխանատուութիւնն, ուրեմն, կը ծանրանայ հայ ծնողքներու վրայ, որոնց մեծամասնութիւնը, աւաղ, մոռցած իրենց ազգային պարտականութիւնը, թոյլ տուած են իրենց զաւակներուն օտարութեան մինչև խորը մխրճուիլ ու այլասերիլ։

Հայ ծնողքներէն շատեր կան, որ ձգած են իրենց զաւակները ազատ իրենց նախասիրութիւններուն մէջ, բան մը՝ որ գէշ հետևանք կրնայ ունենալ ազգային տեսակէտով։

Ընտանիքներ կան, որ ամիսներով իրենց պզտիկները հեռու կը պահեն ազգ. եկեղեցիէն, հայկական երևոյթներէ, հանդէսներէ և ազգային ամէն ընկերական հաւաքոյթներէ։

Ասիկա պարզապէս տգիտութեան և ազգային ոգիին պակասի արդիւնք է, որուն զոհը որքան որ հայութիւնը պիտի ըլլայ ապագային, նոյնքան և թերևս աւելի իրենք, հայ ծնողքները, պիտի ըլլան անկասկած։

Ատեն է, որ հայ ծնողքներ, հանրային գործիչներ ու առաջնորդներ ընդունին այս ծանրակշիռ պարագան և սթափին իրենց մեղկ ու թոյլ ընթացքէն, ամերիկահայ նոր սերունդը կորուստի անդունդէն հեռացնելու համար։

Ազգային մարմիններ թող հետաքրքրուին այս հրատապ հարցով, եթէ փափագող են հայութիւնը հայ պահելու Ամերիկայի այս հսկայ ձուլարանին մէջ։

Մաղաք Պ. Պէրպէրեան

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍՈՒԼԹԱՆ ԱՀՄԷԴ ՇԱՀԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԷՍՆԵՐԸ ԹԱՒՐԻԶՈՒՄ

Թաւրիզ, 10 յուլիսի

Թագաւորութեան հանդէսները տևեցին Թաւրիզում 2 գիշեր և 3 օր՝ սկսած յուլիսի 7-ից։

Յուլիսի 7-ին նահանգական իշխանութիւնը և հիւպատոսները յայտարարեցին ժողովրդին թագաւորութեան օրը և յորդորեցին կատարել հանդէսներ և շքեղ լուսավառութիւն ի պատիւ Թագակիր վեհապետի։ Թէհրանից կենտրոնական կառավարութիւնը Շուջա-ուդ-Դովլէին յատկացրել էր 6000 թումանի մի գումար այդ նպատակով. սակայն նահանգապետը չընդունեց յիշեալ գումարը և իր անձնական գանձից ծախսեց։ 500 թումանի բիւջէտ մաքսատունն էր ըստացել առանձին Թէհրանի վարչութիւնից, 200 թուման՝ հեռագրատունը։

Յուլիսի 7-ին, 8-ին և 9-ին ամբողջ քաղաքը տօնական փառահեղ կերպարանք ունէր. շուկաները, փողոցները, պետական պաշտօնատները, անհատական բնակարանները, մզկիթները, հիւպատոսարաններն անխտիր, հայոց առաջնորդարանը և օտարների հաստատութիւններն ու տները զարդարված էին պարսկական գեղեցիկ գորգերով, շալերով, մետաքսներով, նկարներով, բնական ու արհեստական ծաղիկներով ու շողշողուն ջահերով. իսկ գիշերները շքեղ և ակնախտիղ լուսաւորութեամբ։ Ուրախ ազգաբնակութիւնը զուարճանում էր բազարներում և փողոցներում նուագածութեամբ, երգեցողութեամբ և «Ռուսամ, զինդէբադ շահնշահի Իրան» բացագանչութիւններով։ Թուրք ժողովրդի խնդութիւնն անսահման էր երևում. մօտիկ անցեալում գոյութիւն ունեցող արիւնալի անցքերից, յափշտակութիւններից և դժնդակ կալանքների քամիների օրերից յետոյ առաջին անգամն էր, կարելի է ասել, որ Թաւրիզը հագել էր տօնական հարսանեկան փառաւոր զգեստներ և ժողովուրդը գտնվում էր խնդավառ տրամադրութեան մէջ։ Մի խօսքով փառաւոր զարդարանքը, հեզ քամուց փողփողացող օտար պետութիւնների և պարսից դրօշակները և առհասարակ ազգաբնակութեան խնդութիւնը մի նոր տեսակ դիւթական կերպարանք էին տալիս Թաւրիզին։

Առանձնապէս աչքի էին ընկնում ռուսական, ֆրանսիական և մանաւանդ գերմանական հիւպատոսարանների արդ ու զարդն և լուսավառութիւնը։ Գերմանականը ոչինչ չէր խնայել ուրիշներին գերազանցելու, երևի բոլորից աւելի դուր գալու համար պարսիկների աչքին։ Շահըր-նօվ քաղաքամասում գերմանացիների ունեցած հսկայ մանարան-գործարանը նոյնպէս մասնակցեց տօնակատարութեան, և յուլիսի 8-ի գիշերը գործարանի արտաքինը՝ թաղված էլեկտրական լուսաւորութեան մէջ՝ ներկայացնում էր մի մօգական ամրոց։ Իրանց հերթին ետ չէին մնացել հայ վաճառականները՝ [illegible] Ամիրի քարվանսարայում, և հայոց առաջնորդարանը՝ Ղալայում։

Յուլիսի 8-ին, բուն թագաւորութեան օրը, առաւօտվանից երկար թնդանօթաձգութիւնն աւետեց Սուլթան Ահմէդ շահի թագաւորութիւնը։ Գեներալ նահանգապետ Շուջա-ուդ-Դովլէի պաշտօնարանում տեղի ունեցաւ սալամ՝ պաշտօնական ընդունելութիւն, ուր եկել էին համազգեստներով բոլոր հիւպատոսներն իրանց շնորհաւորութիւնը անելու շահի ներկայացուցչին։ Ներկայացաւ նաև առաջնորդական փոխանորդ Կարապետ քահ. Մանուկեան և ներկայութեամբ բոլոր բազմականների՝ թուրքերէն լեզուով հակիրճ և գեղեցիկ խօսքերով յայտնեց Ատրպատականի հայութեան կողմից շնորհաւորութիւն և պատշաճ մաղթանք Թագակիր վեհապետի արեշատութեան համար։ Նահանգապետը շնորհակալութիւն յայտնեց փոխանորդին և խոստացաւ հայ հասարակութեան իղձը հասցնել ուր որ անկ է։ Երեկոյեան Շուջա-ուդ-Դովլէի ապարանքում տեղի ունեցաւ շքեղ բանկէտ, ուր հրաւիրված էին դիպլոմատիական մարմինը, քաղաքային ու զինուորական մեծամեծներ և այլ պատուաւոր անձնաւորութիւններ։

Յուլիսի 9-ին տօնական կերպարանքը տեղն ու տեղն էր. ժողովուրդը ուրախ, զինուորական երաժշտութիւնն ու հայ երաժշտախումբը զուարճացնում էին հասարակութեան այս ու այն հաստատութեան առաջ։ Երեկոյեան բոլոր հիւպատոսներն և այլ պաշտօնական անձնաւորութիւններ հրաւիրված էին Ղում-թաղի՝ պարսից կօզակների բանակատեղին, որտեղ եղաւ փարթամ մեծարանք և հոյակապ լուսավառութիւն նահանգապետի հաշուով։

Սկսած նահանգապետից բոլոր պաշտօնական անձնաւորութիւնները հեռագրով շնորհաւորել են շահի թագաւորութիւնը։

Խիստ պատշաճաւոր լեզուով ու բովանդակութեամբ մի հեռագիր ևս թագաւորութեան օրից մի օր առաջ ուղարկեց առաջնորդական փոխանորդը, արտայայտելով Ատրպատականի հայութեան կողմից բարեմաղթութիւններ Պարսկաստանի Թագակիր վեհապետին։

Ամբողջ տօնակատարութեան ժամանակամիջոցում ռուս պահակներ շրջում էին հոծ բազմութեամբ լիքը բազարներն ու փողոցները՝ կարգը պահպանելու համար։

Հայկազուն

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ «Петерб. Курьеръ»-ին յայտնում են Բեռլինից, որ Գերմանիան բաւարարված է սերբիական պատասխան նօտայով։ Բեռլինի դիպլոմատիական շրջաններում գտնում են, որ Աւստրիան պարտութիւն կրեց։

◆ Ռուսական դիպլոմատիական շրջաններում Սերբիայի պատասխան նօտան միանգամայն համապատասխան են գտնում իրերի իսկական դրութեանը։

◆ «Голосъ Руси»-ին հաղորդում են Բէլգրադից, որ յուլիսի 13-ի առաւօտը, Կլադովի մօտ, աւստրիացիները, հրացանաձգութիւնից յետոյ, բռնել են սերբիական 2 նաւ։

◆ Հռոմից յայտնում են, որ Իտալիայի զինուորական հաստատութիւնները շտապ պատրաստութիւններ են տեսնում ի դէպս հնարաւոր բարդութիւնների։

◆ Ջուլֆայից հեռագրում են, որ Մակուի հարցը մօտ է իր վճռին։ Սարդարը դիմել է Թիւրքիայի օգնութեան, այնտեղ ուղարկելով իր որդուն։

Խմբագիր-հրատարակիչ՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱՔՈՒ.—**Արագ գնացքը** № 6—12 ժ. 8 ր. ցեր., հասնում է Աղստաֆա 2 ժ. 11 ր., Գանձակ 4 ժ. 23 ր., Եւլախ 5 ժ. 43 ր., Հաջի-Կաբուլ 8 ժ. 56 ր. եր., Բաքու 11 ժ. 50 ր. գիշ.։ **Պօստատար գնացքը** № 4—10 ժ. 20 ր. գիշ., հասնում է Աղստաֆա 1 ժ. 1 ր. գիշ., Գանձակ 4 ժ. 7 ր. առ., Եւլախ 6 ժ. 56 ր. առ., Հաջի-Կաբուլ 10 ժ. 40 ր. առ., Բաքու 3 ժ. 22 ր. ցեր.։ **Մարդատար գնացքը** № 8—6 ժ. 25 ր. եր., հասնում է Աղստաֆա 8 ժ. 49 ր. եր., Գանձակ 11 ժ. 22 ր. գիշ., Եւլախ 1 ժ. առ., Հաջի-Կաբուլ 4 ժ. 42 ր. առ. Բաքու 7 ժ. 58 ր. առ.։ **Մարդատար գնացքը** № 12—4 ժ. 5 ր. ցեր., հասնում է Աղստաֆա 6 ժ. 48 ր. եր., Գանձակ 9 ժ. 32 ր., Եւլախ 11 ժ. 17 ր. գիշ., Հաջի-Կաբուլ 3 ժ. 33 ր., Բաքու 7 ժ. 25 ր. առ.։ **Խառն գնացքը** № 22—4 ժ. 58 ր. առ., հասնում է Աղստաֆա 9 ժ. 46 ր. առ., Գանձակ 2 ժ. 15 ր. ցեր., Եւլախ 4 ժ. 58 ր. ցեր.։ Հաջի-Կաբուլ 11 ժ. 4 ր. գիշ., Բաքու 5 ժ. 4 ր. առ..

ԲԱԹՈՒՄ.—**Պօստատար գնացքը** № 3—9 ժ. 54 ր. առ., հասնում է Միխայլօվօ 1 ժ. 59 ր. ցեր., Բաթում 11 ժ. 8 ր. գիշ.։ **Մարդատար գնացքը** № 7—2 ժամ 18 ր. ցերեկվայ, հասնում է Միխայլօվօ 5 ժ. 35 ր. եր., Բաթում 12 ժ. 48 ր. գիշ.։ **Մարդատար գնացքը** № 9—8 ժ. 53 ր. գիշ., հասնում է Միխայլօվօ 1 ժ. 4 ր. գիշ., Բաթում 10 ժ. 1 ր. առ.։ **Խառն գնացքը** № 21 (մարդատարի արագութեամբ ապրանքների համար)—2 ժ. 59 ր. գիշ., հասնում է Միխայլօվօ 9 ժ. 3 ր. առաւ., Բաթում 10 ժ. 10 ր. գիշ.։ **Արագ գնացքը** № 5—8 ժ. 16 ր. եր., հասնում է Միխայլօվօ 11 ժ. 15 ր. գիշ., Բաթում 6 ժ. 33 ր. առ։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ.—**Պօստատար գնացքը** № 4/3—12 ժ. 56 ր. ցեր., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 10 ր. ցեր., Ալէքսանդրապօլ 11 ժ. 53 ր. գիշ., Էջմիածին 5 ժ. 12 ր. [illegible] (առանց Երևան մտնելու), Նախիջեւան 10 ժ. 11 ր. առ., Ջուլֆա 11 ժ. 38 ր. ցեր.։ **Խառն գնացքը** № 24/25 (IV կարգի վագոններով)—10 ժ. 58 ր. առ., հասնում է Ղարաքիլիսա 9 ժ. 20 ր. գիշ., Ալէքսանդրապօլ 4 ժ. 18 ր. առ., Ալագեազ 10 ժ. 8 ր. ցեր., Ուլուխանլու 1 ժ. 18 ր. ցեր., Նախիջեւան 8 ժ. 18 ր. եր., Ջուլֆա 10 ժ. 13 ր. գիշ.։ **Մարդատար գնացքը** № 17/18—6 ժ. 58 ր. եր., հասնում է Ղարաքիլիսա 1 ժ. 57 ր. գիշ., Ալէքսանդրապօլ 5 ժ. 19 ր., Էջմիածին 10 ժ. 21 ր., Ուլուխանլու 10 ժ. 49 ր., Երևան 11 ժ. 42 ր. առ.։ **Մարդատար գնացքը** № 14/13—11 ժ. 13 ր. գիշ., հասնում է Ղարաքիլիսա 6 ժ. 14 ր. առ., Ալէքսանդրապօլ 9 ժ. 41 ր. ցեր., Կարս 1 ժ. 8 ր. ցեր.։

ԲՕՐԺՕՄ.—**Մարդատար գնացքը** № 17/18—7 ժ. 28 ր. առ., հասնում է Բօրի 10 ժ. 5 ր. առ., Բօրժօմ 12 ժ. 48 ր. ցեր.։ **Մարդատար** № 19/20—3 ժ. 20 ր. ցեր., հասնում է Բօրի 5 ժ. 51 ր. ցեր., Բօրժօմ 8 ժ. 26 ր. երեկ.։

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱՔՈՒԻՑ.—**Արագ գնացքը** № 5—7 ժ. 41 ր. եր. **Պօստատար գնացքը** № 3—8 ժ. 58 ր. առ.։ **Մարդատար գնացքը** № 7—1 ժ. 42 ր. ցեր.։ **Խառն գնացքը** № 21—2 ժ. 17 ր. գիշերվայ։ **Մարդատար գնացքը** № 11—10 ժ. 5 ր. առ.։

ԲԱԹՈՒՄԻՑ.—**Պօստատար գնացքը** № 4—9 ժ. 50 ր. երեկ.։ **Մարդատար գնացքը** № 8—5 ժ. 55 ր. ցեր.։ **Մարդատար գնացքը** № 10—9 ժ. 51 ր. առ.։ **Խառն գնացքը** № 22—3 ժ. 55 ր. գիշ.։ **Արագ գնացքը** № 6—11 ժ. 8 ր. առ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ.—**Պօստատար գնացքը** № 4Д./3—7 ժ. 21 ր. եր.։ **Խառն գնացքը** № 26/27 (IV կարգի վագոններով)—4 ժ. 41 ր. ցեր.։ **Մարդատար գնացքը** № 18/17—8 ժ. 28 ր. առ.։ **Մարդատար** (Կարսից) **գնացքը** № 16/15—6 ժ. 58 ր. առ.։

ԲՕՐԺՕՄԻՑ.—**Մարդատար գնացքը** № 17/18—10 ժ. 28 ր. եր.։ **Մարդատար գնացքը** № 19/20—7 ժ. 55 ր. առ.։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Բ. Հ. Կուլտ. Միութեան

ՄԵԼԻՈՐԱՏԻՎ ՍԵԿՑԻԱՆ Սաղիան գիւղի ջուլհականոցի համար հրաւիրում է հմուտ ՎԱՐՊԵՏ կամ ՎԱՐՊԵՏՈՒՀԻ։ Ռոճիկ ամսական մինչև 40 րուբլի, սենեակ, ծառայ և վառելիք։ Դիմել Բաքու՝ Կուլտուրական Միութեան գրասենեակը։

(օ. մ.) 718. 4—1

ԿՈՎԿԱՍԵԱՆ
◆ ԳԻՆԻ ◆

ԾԱԲԼԻ

Սեղանի 1913 թ.
Դէլիկատ. 1912 թ.
Էկստրա 1911 թ.
Կօրդիալ 1910 թ.

КОРДІАЛЪ
1910
КАВКАЗСКОЕ ВИНО
Телеф. № 17-48

680. 100—9

Թիֆլիս, Շտաբնի փողոցի անկիւն, վրաց նախկին սեմինարիայի դիմաց։
Տէլէֆօն № 17—48.

Թաւրիզի թեմական դպրոցի համար հարկաւոր է մի փորձված, բարձրագոյն կամ միջնակարգ կրթութեամբ,

ՌՈՒՍՈՒՑԻՉ,

որը պէտք է աւանդէ մաթեմատիկական առարկաներ Գ—Զ դասարաններում՝ 15 ժամ, և ռուսաց լեզու Ե և Զ դասարաններում 8 ժամ։ Դասավճարն է 55 րուբլի։ Ցանկացողները պէտք է դիմեն Թաւրիզ, դպրոցի տեսուչ Կ. Պիոնեանին մինչև օգոստոսի 10-ը։

694. 5—5

Հաղրութի հայոց ծխ. երկդասեան երկսեռ դպրոցի համար հարկաւոր է

ՌՈՒՍՈՒՑԻՉ

ռուսաց լեզուի, պատմութեան և աշխարհագրութեան՝ շաբաթական 24—26 դաս։
Դիմել՝ Ванкъ (Карягинс. уѣзда) Попечительству армянской школы.

(հ. կ.) 711. 3—2

ՄԵՂՐԻԻ ծխական դպրոցի համար ՀԱՐԿԱՒՈՐ Է

ԱՒԱԳ-ՈՒՍՈՒՑԻՉ

18 դասով և ռուսաց լեզուի

ՄԻ ՎԱՐԺՈՒՀԻ,

որը աւանդելու է նաև կար ու ձև։ Ցանկալի է, որ լինեն ամուսիններ կամ քոյր և եղբայր։
Պայմանների մասին դիմել «Մշակի» խմբագրատուն՝ Լևոն Դանիէլեանին կամ Գ. Մելոյեանին։

(հ.) 621. 2—2

Բոլոր հայ գրախանութներում վաճառվում են.

ԳՐԻԳՈՐ ՎԱՆՑԵԱՆԻ
ԿԱԶՄԱԾ ԴԱՍԱԳՐՔԵՐԸ

«Հայ հեղինակներ»	1 ր. »
«Հայոց պատմութիւն»	50 կ.
«Պատմ. քերականութիւն»	75 կ.
«Դպր. քերականութիւն»	35 կ.
«Գրաբարի ուղղագրութիւն».	5 կ.

Պահեստը «Գիրք» գրախանութում.

(հ. կ.) 710. 5—2

Լոյս տեսաւ
«ՓՈՐՁԱՆՔՆԵՐԻ ԲԺՇԿԱՐԱՆ»

պարզ և հասկանալի լեզուով ամէն մայրու համար։ Անհրաժեշտ է մանաւանդ գաւառացիներին, որտեղ չը կայ բժիշկ և դեղատուն։ Ամէն տեսակ պատահական փորձանքներ և նրանց օգնելը ամենահեշտ միջոցներով։ Դեղատոմսով և բացատրութիւններով։ Գինը 30 կ.։ Ծախվում է նաև «Վեներական ախտերի եւ ծածուկ ցաւերի բժշկարան», նկարներով, բազմաթիւ րեցեպտներով և խորհուրդներով։ Գինը 50 կ.։ «Ծիծաղի տկճար», անէկդոտներ։ Գինը 20 կ.։ «Կնիկարմատի շալվարը», վօդևիլ։ Գինը 20 կ.։ «Րաֆֆի» կենսագր. պատկերով։ Գինը 10 կ.։ «Միհնոյն զաղազամ» պատմուածք։ Գինը 7 կ.։ Դիմել Թիֆլիս, գրավաճառներին, և ինձ՝ Тифлисъ, Семеновская ул. № 9. Медиц. фельдшеру А. Г. ЕСАЯНЦУ. Գրքերի գինը և ճանապարհի ծախսի համար 17 կ. մարկաներով առաջուց ուղարկել։

(հ. կ.) 337. 100—28

STEH BIERHALLE-Ի ԿՈՂՄԻՑ

(Վերայի զառիվայր, տ. Մելիք-Ազարեանցի)

Ընդարձակելով բնակարանը և հրաւիրելով խոհարարի, Steh Bierhalle-ը հնարաւորութիւն ունի յարգելի յաճախորդներին առաջարկել ոչ միայն գարեջուր և սառը նախաճաշիկ, այլ և տաք կերակուր՝ ոչ թանկ 25 կոպէկից իւրաքանչիւր բաժինը, ըստ որում յարակցում եմ, որ ամէն օր «Знакъ Тифлиса» լրագրի I էջի վրա կը յայտարարվի ամենօրեայ «մէնիուն»։ Steh Bierhalle-ը բաց է մինչև գիշերվայ ժամը 2-ը և ամէն ժամանակ ունի մաքուր, դուրեկան և էժան գարեջուր ու նախաճաշիկ. բացի այդ՝ յաճախորդների զբաղմունքի համար ստացվում են տեղական և ռուսական լրագիրներ։

Յարգանքով՝ Steh Bierhalle

(հ.) 698. 4—2

Թիֆլիսի Նահանգական Վարչութիւնը

սրանով յայտարարում է, որ առաջիկայ օգոստոսի 3-ին նշանակված նուագուրդը (торги) Թիֆլիսի Արքունական Պալատում՝ կապալով տալու համար էտապային սայլերի մատակարարումը և պահպանումը,—յետաձգվում է նոյն ամսի 5-ին։

708. 3—3

ՏԵԽՆԻՔԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ
ԻՆԺԵՆԵՐ
Տ. Ա. ԲՈՒԴԱՂԵԱՆԻ

Բաքու, Կրասնովօդսկայա փ., տ. Աւան-Ուզբաշեանցի։ Հեռախօս №№ 23-49, 23-50

Առաջարկում է ամբողջ Կովկասի և Պարսկաստանի համար իսկական ԴԻԶԵԼ շարժիչներ (մոտորներ) յայտնի ԿՈԼՈՄԵՆՍԿԻ ընկ. մեքենայագործարանից։

Հորիզոնական անգլիական շարժիչներ (մոտորներ) «ԿՐՈՍՍԼԵՅ» ընկերութեան մեքենայագործարանից «Դիւրացրած Դիզել» սիստեմի, որ գործ է ածվում նաւթի բոլոր տեսակներով. նաւթի ծախսն է մի ժամում ամէն մի ոյժին $1/2$ ֆունտ կամ 200 գրամ։

Գազային շարժիչներ, որոնք բանում են թէ բնական և թէ գեներատորային գազով։

Ջրհան և ջրմուղ մեքենաներ (նասօսներ)։

Ջրի շարժիչներ (տուրբինաներ)։

Սառոյց պատրաստող մեքենաներ «ԴԻՆԱՄՕ» ընկ. գործարանից ամէն տեսակի։

Երկրագործական մեքենաներ՝ լօկոմօբիլներ, ցորեն մաքրող մեքենաներ, տրակտորներ և այլն յայտնի ամենա[illegible] ամերիկական «ԿԷՅՍ» (Case) ընկերութեան գործարանից։

Մեծ ճանապարհի վրա աշխատելու համար ԱՒՏՕՄՕԲԻԼՆԵՐ նոյն ամերիկական «ԿԷՅՍ» (Case) ընկերութեան գործարանից։

Վերոյիշեալ տեխնիքական գրասենեակը իր վրա է վերցնում զանազան գործարաններ սարքել և գործի գցել իր միջոցներով՝ ինժեներներով և վարպետներով։

Դիմել Баку, Техническая Контора Т. А. БУДАГЯНЦЪ.
Արտասահմանից՝ Bacou (Russie) Bureau Technique T. A. Boudaguian, Ingénieur.

(հ. կ.) 551. 0—14

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный